ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱԹԵՎԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆ. Կարեն Արտաշեսի Մաթևոսյան
պ.գ.դ., պրոֆ. Համլետ Լենսերի Պետրոսյան
պ.գ.դ., պրոֆ. Արման Սամվելի Եղիազարյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հոկտեմբերի 30-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդում (հասցե՝ ք. Երևան, 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.դ. Երվանդ Համբարձումի Գրեկյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի և հարակից վանքապատկան գյուղատեղերի պատմական նկարագրին և գրավոր ժառանգության համալիր քննությանը:

Թեմայի արդիականությունը. Միջնադարագիտության մեջ առանցքային նշանակություն ունի պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը գրավոր սկզբնաղբյուրների և հնագիտական պեղածո նյութի միջոցով, հետևաբար, ցանկացած միջնադարյան հուշարձանի ուսումնասիրությունն ինքնին ենթադրում է համալիր հետազոտական աշխատանք՝ միջգիտակարգային լայն գործիքակազմով:

Միջնադարյան Տաթևի և նրա հարակից վանքապատկան գյուղատեղերի գրավոր-մշակութային ժառանգության համընդգրկուն ուսումնասիրությունն արդիական է, քանի որ առաջին անգամ Սյունյաց հոգևոր միջնաբերդ հանդիսացող Տաթևի վանքի պատմությունը լուսաբանվում է բացառապես գրավոր հուշարձանների՝ վիմական արձանագրությունների, ձեռագրերի հիշատակարանների, մատենագրական աղբյուրների, դիվանական վավերագրերի, այդ թվում նաև՝ այլալեզու կալվածագրերի և հրովարտակների, ինչպես նաև՝ հայ արվեստի համալիր ուսումնասիրության համապատկերում:

Ատենախոսության թեմայի ընտրության գաղափարը հղացել է դեռևս 2014-2015 թթ.՝ Տաթևի վանքի վերականգնման աշխատանքներով պայմանավորված հնագիտական պեղումների ընթացքում (ղեկավար՝ պ.գ.թ. Հուսիկ Մելքոնյան): Մեր մասնակցությունը պեղման աշխատանքներին լավ հնարավորություն էր մեկ առ մեկ վերընթերցելու նախկինում հրատարակված, իսկ հաճախ նաև՝ դեռևս անտիպ մի շարք վիմագրեր: Հնագիտական պեղումներին հաջորդեցին 2018-2023 թթ. Տաթևի վանքում և հարակից հին գյուղատեղերում ու անապատներում մեր իրականացրած վիմագրագիտական բնույթի դաշտային-հավաքչական աշխատանքները, որոնց արդյունքում ընդօրինակել ենք 9-19-րդ դդ. 220 նորահայտ արձանագրություն, ճշգրտումներ արել նախկինում հրատարակված վիմագրերում (140 միավոր), լուսանկարել և չափագրել ենք 1000-ից ավելի միջնադարյան հուշարձան, այդ թվում նաև՝ ցարդ անհայտ եկեղեցի, մատուռ, քառանիստ կոթող, թևավոր խաչ, խաչքար, տապանաքար և այլն: Այսօրինակ նորահայտ հնագիտական և վիմագրական նյութն աղբյուրագիտական այն շտեմարանն էր, որը պիտի համալրվեր նաև Տաթևի գրչության դպրոցից մեզ հասած ձեռագրերով՝ ոչ միայն վանքում և անապատներում ընդօրինակված, այլև՝ նկարազարդված, վերակազմված, տարբեր առիթներով վանքին նվիրաբերված, որևէ հիշատակություն պարունակող կամ, պարզապես, վանքի գրատանը պահված (շուրջ 400 միավոր): Դրանք հնարավորություն ունեցանք ուսումնասիրելու ինչպես Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրատանը, Փարիզի ազգային գրադարանում, Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի մատե-

նադարաններում, այնպես էլ աշխարհի տարբեր հոգևոր-ձեռագրական կենտրոններից՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց, Զմմառի, Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքերի մատենադարաններից ստացած լուսապատճենների միջոցով:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Աշխատանքի բուն նպատակը Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի միջնադարյան «առաքելությունը» լուսաբանելն է: Արդարև, հայրապետական աթոռի՝ Վաղարշապատ-Էջմիածնից դուրս լինելու և, հատկապես, հեռավոր Կիլիկյան թագավորության մայրաքաղաք Սսում հաստատվելու (1293-1441 թթ.) պարագայում Սյունյաց մետրոպոլիտական աթոռն է ստանձնել երկրի արևելյան մասում հոգևոր կենտրոնի և Հայ եկեղեցու ճշմարիտ դավանության պահպանման բուն առաքելությունը: Ավելին, 13-14-րդ դդ. լայնորեն ծավալված ունիթորական կամ միարարական շարժումը կասեցնելու համար հենց Տաթևի վանքն է հանդիսացել հիմնական կենտրոնը, որի առաջնորդների և ռաբունապետների ջանքերով միայն հաջողվել է հայրապետական աթոռը Կիլիկիայից փոխադրել Մայր հայրենիք և վերահաստատել Վաղարշապատ-Էջմիածնում (1441 թ.): Բացի այդ, Տաթևի վանքն առանցքային դեր է ունեցել երկրի ինչպես հոգևոր, այնպես էլ՝ աշխարհիկ կյանքում, այն հանդիսացել է Սյունյաց հոգևոր ավատատիրության և վանական կալվածատիրության բուն կենտրոնը՝ ունենալով վանքապատկան և հարկատու շուրջ 700 գյուղ: Հաշվի առնելով այդ՝ փորձել ենք ներկայացնել այս հոգևոր-մշակութային կենտրոնի բուն էությունը միջնադարի, հատկապես, զարգացած և ուշ շրջափուլերում, որի իրագործման համար մեր առջև ունեցել ենք հետևյալ հիմնախնդիրները.

ա. Պարզել ավանդաբար Տաթևի վանքի հետ առնչվող Սբ Եվստաթեոս առաքյալի ինքնությունը, գրավոր աղբյուրներում նրա անվանակիր հիշատակումների ժամանակագրական սահմանները, վանքի հյուսիսային պարսպապատից դուրս գտնվող կիսավեր հուշակառույցի ժամանակն ու հնարավոր կապը Սբ Եվստաթեոսի հետ և, ի վերջո, փորձել հասկանալ վանքի գլխավոր՝ Սբ Պողոս-Պետրոս առաքյալներին նվիրված տաճարն ու ողջ համալիրը 14-15-րդ դարերից ի վեր Սբ Եվստաթեոսին վերագրելու բուն պատճառը:

բ. Քննել Ստեփանոս Օրբելյանի պատմագրքում վկայված առանցքային դրվագները՝ հասկանալու համար խնդրո առարկա պատմաշրջանի քաղաքական, կրոնական-դավանաբանական, տնտեսական և մշակութային խնդիրների բուն շարժառիթը: Եթե Սյունյաց աթոռի պատմությունը վաղ միջնադարում լուսաբանվում է բացառապես Ստեփանոս Օրբելյանի ավանդած տեղեկությունների հիմամբ, ըստ որոնց՝ դեռևս 4-րդ դարում Սյունյաց աթոռը հաստատվել է Շաղատ գյուղաքաղաքում, ուր գտնվելիս է եղել նաև բազում սրբություններ ամփոփող Շաղատի Սբ Ստեփանոս վանքը (ներկայիս Սբ Գևորգ եկեղեցու տեղում), ապա 9-րդ դարասկզբից աթոռը փոխադրվել է Տաթև, որտեղ դեռևս 4-5-րդ դդ. կառուցված փոքր եկեղեցի է եղել: Սյունյաց նորահաստատ Տաթևի աթոռը սկզբից ի վեր գնման ու նվիրաբերման միջոցով կալվածքներ է ձեռք բերել՝ դառնալով հոգևոր ավատատիրության ամենախոշոր կենտրոնը:

գ. Նորահայտ և հրատարակված սկզբնաղբյուրների միջոցով պարզել հուշարձանների շինարարական փուլերը, վերակառուցումների հնարավոր պատճառները, այդօրինակ աշխատանքները նախաձեռնած առաջնորդ-վանահայրերին, մեկենասներին, վարպետներին, այցելու-նվիրատուներին:

դ. Առանձնակի անդրադառնալ Սյունյաց կոթողային մշակույթի Տաթևի դպրոցին՝ փորձելով վեր հանել ժամանակագրական առանձնահատկություններն ու զուգահեռները, քանդակագործական արվեստի՝ տեղի դպրոցին բնորոշ հատկանիշներն ու վաղ միջնադարի ավանդույթների վերականգնման ակնհայտ փորձերը 9-10-րդ դդ. (հուշակառույց, հուշասյուն, թևավոր խաչ և այլն):

ե. Դասակարգել և հնարավորինս ամբողջացնել վանքի ձեռագրական ժառանգությունը՝ պարզելու համար Տաթևի վանքի դպրոց-վարդապետարանին և համալսարանին զուգահեռ գործած գրչության կենտրոնից մեզ հասած ձեռագրերի ժամանակագրական, բովանդակային, գրչական ու մանրանկարչական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ձեռագրաստեղծման և ձեռագրապահպան գործի մասնակից անձանց ավանդը:

զ. Վանքապատկան հարակից մի քանի գյուղերի՝ Տաթևի, Հալիձորի, Շինուհայրի, Խոտի և Հարժիսի օրինակով ցույց տալ այդ գյուղերի սոցիալական կարգավիճակը միջնադարում, հարկատվությանն ու գյուղացիների շահագործմանը միտված քայլերը, որոնք հաճախ հանգեցրել են եկեղեցու դեմ տեղի ունեցած գյուղացիական շարժումների և ապստամբությունների: Քննության նյութ դարձնել նաև նշված հին գյուղատեղերից մեզ հասած մշակութային ժառանգությունը, որը երբևէ համալիր չի լուսաբանվել:

է. Պարզել նաև վանքամերձ լքված գյուղատեղերում պահպանված փոքր եկեղեցիների հնարավոր կապը բուն համալիրի հետ՝ ամբողջացնելով դրանց գրավոր ժառանգությունը:

ը. Տաթևի ուշմիջնադարյան շրջափուլը լուսաբանելու համապատկերում անդրադառնալ նաև Սյունիքում անապատական շարժման վերազարթոնքին, Որոտանի հովտում հիմնված հարանց և կուսանաց անապատների մշակութային ժառանգությանը, այդ թվում նաև՝ գրչության դպրոցներին:

Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները. Ուսումնասիրության բուն ժամանակաշրջանը միջնադարն է իր հիմնական երեք՝ վաղ, զարգացած և ուշ շրջափուլերով, որոնցից յուրաքանչյուրը փորձել ենք ներկայացնել խնդրի ուսումնասիրության ընդհանուր համապատկերում՝ պարզելով մշակութային հնարավոր բոլոր տեղաշարժերն ու փոխազդեցությունները: Տեղագրության առումով իրադարձությունների առանցքում պատմական Սյունիքն է՝ իր հոգևոր կենտրոն Տաթևի վանքով, որի աշխարհագրական սահմաններն ընդլայնվում են միջնադարում ունեցած վանքապատկան գյուղերի՝ Սյունյաց տասներկու գավառներում սփռված լինելու շնորհիվ: Այս առումով առանձնակի շեշտվել է վանքապատկան հարակից գյուղերի և դրանց մշակութային ժառանգության հնարավոր աղերսը հոգևոր կենտրոնի հետ:

Հիմնախնդրի ուսումնասիրված լինելը. Միջնադարյան Հայաստանի վանական համալիրներից որևէ մեկի մասին այնքան չի գրվել ու խոսվել, որքան Տաթևի, սակայն պետք է փաստել, որ վանական համալիրի և, առավել ևս, վանքապատկան հարակից բնակավայրերի գրավոր ժառանգությունը ցայսօր համակողմանի ուսումնասիրված չէր: Տաթևի վանքի պատմության ուսումնասիրման համար առանցքային սկզբնաղբյուր է համարվում Ստեփանոս Օրբելյանի պատմագիրքը (1297 թ.), որի մի քանի գլուխներում (ԼԹ-ԽԳ, ԾԱ, ԿԷ և այլն) Սյունյաց տան պատմիչը մանրամասն ներկայացրել է վանքի շինարարական փուլերն ու առանցքային իրադարձությունները հիմնադրումից մինչև 13-րդ դարավերջ՝ վկայաբերելով վանքի Սբ Առաքելոց եկեղեցու վիմագրերից երկուսը, որոնք այսօր կիսաեղծ են:

Զարմանալին այն է, որ դեռևս 1888 թ. Տաթևի վանք կատարած իր ուխտագնացության տպավորությունների նոթերում պատմաբան Լեոն գրում է, որ հուշարձանախմբի կառույցների որմերին որևէ նշանավոր վիմագիր չի տեսել, ինչից ենթադրում է, որ այս վանքում վիմագիր կազմելու ավանդույթ, որպես այդպիսին, չի եղել, ուստի միաբանները բավարարվել են միայն վանքում Քոթուկ-մատյան պահելով, որտեղ էլ արձանագրել են անհրաժեշտ տեղեկությունները: Հետագայում Լեոյի այս միտքը կրկնել է նաև պատմաբան Թադևոս Հակոբյանը: Ի հեճուկս մեծանուն պատմաբանների՝ ասենք, որ միայն Տաթևի վանական համալիրի կազմում ընդգրկված հուշարձանների որմերին պահպանվել է ավելի քան 200 վիմագիր, որոնցից շատերն ուշադրության են արժանացել անգամ 19-րդ դարի տեղագիրների կողմից: Նշված դարաշրջանի նկարագրական բնույթի որոշ աշխատություններում ամփոփված են նաև Տաթևի հուշարձանախմբի որմերից և կոթողներից ընդօրինակված մի քանի տասնյակ վիմագրեր: Հատկանշելի են Հովհաննես եպս. Շահխաթունյանցի, Սարգիս արք. Ջալալյանցի, Ղևոնդ վրդ. Ալիշանի, Մատթեոս Փափազյանցի, Երվանդ Լալայանի, Կարապետ Կոստանյանցի, Ալեքսանդր Երիցյանի, Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանի, Արտակ եպս. Սմբատյանի աշխատությունները: Նշվածներից անհամեմատ ամբողջականը Սբ Էջմիածնի միաբան Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանի աշխատությունն է՝ նվիրված Տաթևի, Դադի և Հաղարծինի վանքերի պատմաճարտարապետական հուշարձաններին և վիմագրական ժառանգությանը: Տաթևի վիմագրերն անխոնջ հոգևորականն ընդօրինակել է 1904 և 1911 թթ., երբ ձեռագրեր ուսումնասիրելու նպատակով եղել է հիշյալ վանքերում: Գրքում Տաթևի վանքից և շրջակայքից ամփոփված է 146 վիմագիր, որոնցից 45-ը Մեսրոպ Մագիստրոսը հրատարակել է դեռևս 1918-ին՝ «Արարատ» հանդեսում:

Ցավոք, այս աշխատությունը վրիպել է անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի ուշադրությունից, որը «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի համապատասխան պրակում հրատարակել է Տաթևի և շրջակայքի արձանագրություններից ընդամենը 93-ը, որոնցից 26-ը՝ չպահպանված վիմագրերի շարքում: Դրանցից 6-ը պղնձե զույգ զանգերի, ձեռաց խաչերի, մասանց պա-

հարանի և փայտե դռներից մեկի արձանագրություններն են, իսկ 5 վիմագիր, այդ թվում նաև՝ զանգերից մեկի արձանագրությունը, անհարկի կրկնված են, կամ միևնույն արձանագրության տարբեր հատվածներ ներկայացված են մեկից ավելի թվահամարների ներքո (հմմտ.՝ ՀՄ 4-84, 13-3, 35-37, 44-45, 79-80), ուստի վիմագրերի իրական թիվը «Դիվան»-ում 82-ն է:

Մեսրոպ Մագիստրոսի աշխատությանն անծանոթ է եղել նաև վիմագրագետ Սուրեն Սաղումյանը, որն իբրև նորահայտ է հրատարակել Մագիստրոսի կողմից արդեն իսկ հրատարակված մի շարք վիմագրեր: Տարբեր առիթներով Տաթևի վանքից վիմագրեր են հրատարակվել նաև պատմավիմագրագիտական բնույթի աշխատություններում (Ա. Քալանթարյան, Ա. Մանուչարյան և այլք), որոնցում վիմագրերը դիտարկվել են իբրև փաստական նյութ՝ զանազան իրադարձությունների լուսաբանման համար: Սույն ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են նաև մեր տասնամյա ուսումնասիրությունների արդյունքում հրատարակված աշխատություններում՝ 1 գիրք և 23 հոդված գիտական պարբերականներում և ժողովածուներում (տե՛ս կից):

Տաթևագիտության բնագավառում պակաս կարևոր չէ նաև այս հոգևոր կենտրոնի ձեռագրական ժառանգության համալիր ուսումնասիրությունը, քանի որ ինչպես վիմագրերը, այնպես էլ ձեռագրերի հիշատակարանները, հատուկ քննության նյութ երբևէ չէին դարձել: Հայագիտությանը հայտնի է դեռևս նախորդ դարի կեսերից «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարով հրատարակվող «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» բազմահատորյակը, որի՝ 13-17-րդ դդ. հիշատակարաններն ամփոփող հատորներում տեղ են գտել նաև ծագումով Տաթևից կամ Տաթևում ընդօրինակված, նկարազարդված, երբեմն էլ՝ վերակազմված-նորոգված կամ նվիրաբերված ձեռագրերի 250-ից ավելի գրչության, հետագայի, սակավ նաև՝ նախագաղափար օրինակի հիշատակարաններ: Բացի այդ, ուսումնասիրողները երբեմն քննության առարկա են դարձրել Տաթևի և տեղի գրչության դպրոցի հետ կապված մասնավոր հարցեր, ինչպես օրինակ՝ Տաթևի գրատան ձեռագրերի «ճակատագիրը», որը փորձել է պարզել ձեռագրագետ Օնիկ Եգանյանը, Որոտանի հովտի մանրանկարչական դպրոցներին անդրադառնալիս՝ արվեստաբան Աստղիկ Գևորգյանը չի շրջանցել նաև Տաթևի, համանուն հին ու նոր անապատների և Շինուհայրի մանրանկարչական ավանդույթներն ու տեղի ծաղկողներին, կամ էլ, իբրև Գլաձորի համալսարանի տրամաբանական հետնորդ, Տաթևի համալսարանին և տեղի ռաբունապետներին են անդրադարձել մի շարք ուսումնասիրողներ՝ երբեմն քննության նյութ դարձնելով տեղում դասավանդվող առարկաներն ու ընդօրինակված ձեռագրերի բովանդակային հենքը:

Եթե Տաթևի վանքապատկան գյուղերի հարկային պարտավորությունների և սոցիալ-տնտեսական կարգավիճակի մասին վկայող հիմնական աղբյուրը Ստեփանոս Օրբելյանի պատմագիրքն է և դրա հավելագրությունը կազմող Տաթևի վանքի Քոթուկը, ապա Սյունիքում անապատական կյանքի և տեղի հին ու նոր անապատների պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրային արժեք ունեն

Առաքել Դավրիժեցու պատմագրքում և Զաքարիա Ագուլեցու օրագրության էջերում վկայված տեղեկությունները: Դրանց համալիր քննությամբ ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանը հրատարակել է Սյունյաց 17-18-րդ դդ. ճարտարապետական համալիրներին նվիրված մի աշխատություն, ուր առանձնակի ուշադրություն է դարձրել հատկապես անապատային հուշարձանախմբերի ճարտարապետական նկարագրին:

Ատենախոսության փորձաքննությունը. Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրության բաժինը: Ուսումնասիրության հիմնադրույթները լուսաբանվել են հեղինակի՝ Հայաստանում և արտերկրում հրատարակած երկու տասնյակից ավելի ուսումնասիրություններում, հետազոտության արդյունքները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, սեմինարներում, ինչպես նաև դասախոսությունների շրջանակում՝ կարդացած Լուվենի կաթոլիկ համալսարանում (Բելգիա), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանում (Հունաստան), Կոպենհագենի համալսարանում (Դանիա), Ռեգենսբուրգի համալսարանում (Գերմանիա), Ավստրիայի գիտությունների ակադեմիայում (Ավստրիա):

Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը. Ուսումնասիրության համար իբրև սկզբնաղբյուր են հանդիսացել ոչ միայն բուն հնագիտական հուշարձանները, այլև դրանց անքակտելի մասը հանդիսացող վիմագրերն ու ձեռագրերի հիշատակարանները, առանձին դեպքերում անդրադարձել ենք նաև Տաթևի վանքից մեզ հասած եկեղեցական առարկաների արձանագրություններին, վանքապատկան գյուղերի հետ առնչվող հարկացուցակներին, կալվածագրերին և հրովարտակներին, ինչպես նաև՝ հնագիտական պեղածո նյութին:

Սկզբնաղբյուրային արժեք ունեն նաև Տաթևի վանքից և հարակից գյուղատեղերի հուշարձաններից մեզ հասած արխիվային լուսանկարները, որոնք պահպանվել են հետազոտող-լուսանկարիչների պատկերագրքերում կամ արխիվային թողոններում: Այս տեսակետից մեծապես կարևորում ենք Ալեքսանդր Ռոինովի, Դմիտրի Երմակովի, Մատթեոս Փափազյանցի, Գուրոսի (Գուրգեն Պարոնյան-Հովսեփյան) 19-20-րդ դդ. լուսանկարները, ինչպես նաև վիմագրագետներ Սեդրակ Բարխուդարյանի, Սուրեն Սաղումյանի և Գրիգոր Գրիգորյանի անձնական արխիվներում առկա լուսանկարները (20-րդ դարի երկրորդ կես), որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում: Տարբեր առիթներով դրանք օգտակար են եղել սույն ուսումնասիրության համար, ուստի, ըստ անհրաժեշտության, որոշ լուսանկարներ տեղ են գտել ատենախոսության հավելվածում:

Հետազոտության մեթոդաբանությունը. Հետազոտությունն ունի միջգիտակարգային բնույթ, ուստի խնդրո առարկա միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունն իրականացվել է ոչ միայն հնագիտական բնույթի աշխատություններին բնորոշ պատմահամեմատական ու ժամանակագրական մեթոդաբանությամբ, այլև՝ աղբյուրագիտական, ի մասնավորի՝ վիմագրագիտական,

բնագրագիտական, հնագրագիտական, ձեռագրագիտական, ճարտարապետական-հորինվածքային, արվեստաբանական-պատկերագրական վերլուծության մեթոդաբանության լայն գործիքակազմով: Ստեղծված տվյալների շտեմարանի հիմամբ կազմել ենք Տաթևի վանքի և վանքապատկան հարակից հուշարձանների գրավոր ժառանգության՝ վիմագրերի և ձեռագրերի ժամանակագրական ցուցակներ՝ հատկանշելով հուշարձանների ժամանակը, տեղը, բնույթը, աղբյուրը, ձեռագրերի դեպքում՝ բովանդակությունը, մասնակից անձանց՝ հարկ եղած դեպքում վկայակոչելով նաև առանցքային դրվագներ հիշատակարաններից:

Դաշտային-հետազոտական և վիմագրագիտական ուսումնասիրություններով պայմանավորված՝ քարտեզագրվել, չափագրվել կամ պարզապես արտագծվել են խնդրո առարկա բնակավայրերի՝ Տաթևի և հարակից վանքապատկան գյուղերի և գյուղատեղերի (Տաթև, Հալիձոր, Շինուհայր, Խոտ, Հարժիս և այլն) գրեթե բոլոր միջնադարյան հուշարձանները՝ ժամանակակից քարտեզագրության մեթոդաբանությամբ:

Հետազոտությունն իրականացնելիս առաջնորդվել ենք սկզբնաղբյուրների համադրման և քննական վերլուծության սկզբունքով՝ տարբեր իրադարձությունների առիթով վկայակոչելով համապատասխան սկզբնաղբյուրն իբրև փաստական նյութ: Այս առումով նշենք, որ ամբողջական կամ հատվածաբար մեջբերված վիմագրերի դեպքում բնագիրն ընդգծել ենք թավ, իսկ մատենագրական կամ այլ մեջբերումները՝ շեղ տառերով: Նախկինում հրատարակված վիմագրերը հղելիս՝ էջահամարից բացի, նշել ենք նաև վիմագրի համարը տվյալ աշխատության մեջ, որն առաջինից տարբերելու համար ավելի փոքր կետաչափով է:

Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը. Սույն ատենախոսությունը Սյունյաց հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի պատմությունը միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրների քննությամբ լուսաբանող առաջին համալիր հետազոտությունն է, որով փորձ է արվում սահմանել հայագիտությանը ցարդ անհայտ մի նոր գիտաճյուղ, այն է՝ *տաթևագիտությունը*՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով: Ուսումնասիրությունն իրականացվել է ոչ միայն հայագիտությանն արդեն իսկ հայտնի տպագիր վավերագրերի, այլև մեր փաստագրած աղբյուրագիտական շտեմարանի հիմամբ, որն ամբողջացրել ենք 2014-2015 թթ. հնագիտական և 2018-2023 թթ. վիմագրագիտական բնույթի դաշտային-հավաքչական աշխատանքների արդյունքում:

Հետազոտության գիտական նորույթն առաջին հերթին դրսևորվում է ընտրված թեման այսօրինակ մոտեցմամբ ներկայացնելով: Նկատի ունենք միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրների՝ վիմագրերի և ձեռագրերի հիշատակարանների համալիր քննությունը Սյունյաց հոգևոր կենտրոնի պատմությունը լուսաբանելու համար, որը, մեթոդաբանական առումով, նորույթ է հայագիտության մեջ: Դրանով պայմանավորված՝ նյութից բխող խնդիրների հնարավոր լուծումները, հիմնավորումները, համեմատական վերլուծություններն ինչպես պատմական շրջափուլերին վերաբերող, այնպես էլ հուշարձանների ճարտարապետական-հորինվածքային և քանդակային-պատկերագրական առանձնահատ-

կություններին առնչվող հարցերում խարսխված են բացառապես գրավոր աղբյուրների և այլ փաստական տեղեկությունների վրա: Դրանց արդյունքում, առաջին անգամ, վիմագրագիտության արդի պահանջներին համապատասխան, գիտական շրջանառության մեջ է դրվում 9-19-րդ դդ. 220 նորահայտ վիմագիր, որոնցից 152-ը վկայված են ատենախոսության շարադրանքում, իսկ ամբողջական ցուցակը՝ հավելվածում: Նախկինում հրատարակված ևս 140 վիմագիր հիշատակել ենք մեր հետազոտության հետ կապված խնդիրները լուսաբանելիս, որոնք ներկայացվել են ոչ միայն էական ճշգրտումներով, այլև՝ նոր մեկնաբանմամբ, գրչանկար-լուսանկարներով: Ինչ վերաբերում է ձեռագիր աղբյուրներին, ապա Տաթևի գրչության դպրոցից հայտնի և այս կենտրոնի հետ աղերսվող շուրջ 400 ձեռագրերից 131-ը Տաթևի վանքում և համանուն անապատներում ընդօրինակված, նկարազարդված, վերակազմված կամ Տաթևին վերագրելի ձեռագրերն են, շուրջ 150-ը կազմում են Տաթևի երբեմնի գրատան հավաքածուն, իսկ 120-ից ավելի ձեռագրի հիշատակարաններում մեր շնորհաշատ գրիչներն ու ծաղկողները չեն զլացել նաև Սյունյաց հոգևոր միջնաբերդը հիշատակելուց: Միաժամանակ նշենք, որ մենք նպատակ չենք ունեցել ատենախոսության մեջ ընդգրկել բոլոր վիմագրերն ու հիշատակարաններն անխտիր, փոխարենը դրանք վկայված են ըստ անհրաժեշտության՝ նախապատվությունը տալով նորահայտ սկզբնաղբյուրներին, իսկ ամբողջական պատկերը ներկայացրել ենք հավելվածի համապատասխան ցուցակներում:

Լինելով միջգիտակարգային հետազոտություն՝ ատենախոսությունն ունի նաև գործնական լայն նշանակություն: Քննարկվող թեմաների խորագրերն անգամ բավական են պատկերացնելու համար, որ շարադրանքում մեկտեղվել են մի շարք գիտակարգեր, որտեղ իրենց հետաքրքրող նյութը կգտնեն ինչպես պատմաբանները, հնագետներն ու աղբյուրագետները, այնպես էլ նյութը լիովին հասանելի է արվեստի պատմությամբ զբաղվողներին, ի մասնավորի՝ ձեռագրագետներին, արվեստաբաններին, կրոնագետներին և, ինչու չէ նաև, ճարտարապետության պատմության տեսաբաններին: Ըստ այդմ՝ նյութից բխող մի շարք թեմաներ կիրառելի են նաև կրթական համակարգում, հատկապես՝ միջնադարյան հնագիտություն, վիմագրություն, ձեռագրագիտություն, ճարտարապետության պատմություն, հնագրագիտություն, քանդակային արվեստ, խաչքարային մշակույթ և համանման այլ առարկաների դասավանդման ուսումնամեթոդական ծրագրերում:

Հաշվի առնելով նաև մեր օրերում ոչ պակաս կարևորություն ունեցող զբոսաշրջության զարգացման գործոնը և այն, որ քաղաքական առումով ևս Սյունիքի պատմամշակութային ժառանգությունը վերջին շրջանում դարձել է առաջնային հետազոտության առարկա՝ ատենախոսության մի շարք դրույթներ կարող են էական նշանակություն ունենալ Սյունիքի պատմության, ի մասնավորի՝ Տաթև գյուղի և համանուն վանքի, Որոտանի կիրճի Տաթևի վանքապատկան գյուղատեղերի, անապատային համալիրների պատմության և մշակութային

ժառանգության վերաբերյալ բոլորովին նոր և սկզբնաղբյուրներով համակցված տեղեկություն հաղորդելու տեսանկյունից:

Ատենախոսության գործնական նշանակությունն արտահայտված է նաև նրանով, որ դեռևս 1995 թվականից Տաթևի վանական համալիրը և Որոտանի կիրճը՝ իբրև եզակի պատմամշակութային համադրություն, ներառված են եղել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում և այսօր հայաստանյան մի շարք գիտական և հասարակական կազմակերպություններ նախաձեռնել են մշակութային մի ողջ լանդշաֆտի վերարժևորման նախագիծը ՅՈՒՆԵՍԿՕ-ի քննարկմանը ներկայացնելու գործընթացը:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է երկու հիմնական մասից: Առաջին մասն ամփոփում է բուն ատենախոսությունը՝ բաղկացած ներածությունից, հինգ գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից: Երկրորդ մասն ատենախոսության հավելվածն է՝ բաղկացած Տաթևի վանքի և հարակից հուշարձանների նորահայտ և վերընթերցված արձանագրությունների ժամանակագրական աղյուսակից, Տաթևի վանքում և համանուն անապատներում ընդօրինակված, նկարազարդված, վերակազմված կամ այդ գրչակենտրոնների հետ առնչվող որևէ հիշատակություն պարունակող, ինչպես նաև գրատանը պահված ձեռագրերի ցուցակներից, դրանց հապավումների և համառոտագրությունների միասնական ցանկից, Սյունյաց առաջնորդների և Տաթևի վանահայրերի գավազանագրքից՝ յուրաքանչյուրի օրոք տեղի ունեցած հիշարժան իրադարձությունների հատկանշմամբ: Հավելվածի մասն են նաև պատկերային աղյուսակները՝ բաղկացած հին ու նոր լուսանկարներից, վիմագրերի և եկեղեցական առարկաների՝ հիմնականում մեր կողմից արված գրչանկարներից, ինչպես նաև՝ հուշարձանների չափագրություններից (496 լուսանկար, 138 գրչանկար և 36 չափագրություն ամփոփող 147 աղյուսակ) և ութ տեղագրական քարտեզներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ փորձել ենք հիմնավորել թեմայի ընտրության կարևորությունը՝ հատկանշելով դրա արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, ուսումնասիրված լինելը, աղբյուրագիտական և մեթոդաբանական հենքը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, կառուցվածքային առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՏԱԹԵՎԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատենախոսության առաջին գլուխն ամփոփում է բուն հուշարձանախմբի՝ Տաթևի վանական համալիրի շինարարական փուլերը, հուշարձանների ճարտարապետական նկարագիրը, քանդակային հարդարանքը, որմնանկարչությունը, կոթողային մշակույթը՝ ներկայացված նորահայտ և նախկինում հրատարակված վիմագրերի հիմամբ: Տասը ենթագլուխներում և դրանցից բխող ևս ինը ենթամիավորներում փորձել ենք ամբողջացնել Տաթևի վանական համալիրի միջնադարյան պատմությունը՝ սկսելով վանքի հետ սերտորեն աղերսվող Սբ Եվստաթեոս առաքյալի ավանդությունից:

1.1. Սբ Եվստաթեոս առաքյալի ավանդությունը. Սույն ուսումնասիրության համար առանցքային նշանակություն ունի Սբ Եվստաթեոս առաքյալի ինքնությունն ու Տաթևի վանքի հետ ունեցած հնարավոր կապը պարզելը: Բանն այն է, որ գրավոր աղբյուրներում Սբ Եվստաթեոսը մինչև 15-րդ դարը, առհասարակ, չի հիշատակվում: Նրա անունը չեն հիշատակում անգամ Ստեփանոս Օրբելյանը և վաղ շրջանի մատենագիրներն ու վարքագիրները: Տեղի վիմագրերը նույնպես որևէ տեղեկություն չեն հաղորդում նրա մասին, իսկ սրբոց վարքվկայաբանություններն ամփոփող Հայսմավուրք ժողովածուներում Սբ Եվստաթեոսի անունը տարբեր առիթներով վկայված է միայն կողմնակի կերպով, այն էլ՝ ուշ շրջանի խմբագրություններում: Ինչ վերաբերում է ձեռագիր աղբյուրներին, ապա 15-րդ դարից ի վեր ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում Սյունյաց եպիսկոպոսանիստ աթոռը, Տաթևի վանքի Կաթողիկեն և ուխտմիաբանությունը վկայված են *Սբ Առաքելոց*, *Եվստաթեի ուխտ*, *Սրաթեի վանք*, *Սրաթեի աթոռ* և նման այլ անվանաձևերով: Պարզվում է՝ Տաթևի վանքում լայն տարածում գտած կենարար խաչի և սուրբ առաքյալների պաշտամունքը 14-15-րդ դդ. համալրվել է նաև Քրիստոսի կամ Թադեոս առաքյալի աշակերտ համարվող Եվստաթեոսով, իսկ դա բնավ պատահական չէր: 13-14-րդ դդ. Սյունիքում ակտիվորեն քարոզվում էր ունիթորությունը (միարարությունը), իսկ Նախիջևանի Քռնա գյուղում ստեղծվել էր ունիթոր քարոզիչների միաբանությունը, ինչը դավանաբանական առումով լրջագույն սպառնալիք էր ավանդական Հայ եկեղեցու համար: Այս տեսանկյունից էլ կարելի է մեկնաբանել Տաթևում Սբ Պողոս-Պետրոս առաքյալների անունների քողարկման և, այսպես կոչված, Եվստաթեոսով փոխարինելու ձգտումը, որը միտված էր Սյունյաց աթոռը դավանաբանական խնդիրներից զերծ պահելուն և Թադեոսի ենթադրյալ աշակերտով առաքելադիր հռչակելուն:

1.2. Կաթողիկե Սբ Առաքելոց եկեղեցին. 9-րդ դարի առաջին կեսին Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը Շաղատ գյուղաքաղաքից տեղափոխվում է Տաթև, ինչն էլ դառնում է այս հոգևոր կենտրոնի ընդարձակման, գնման ու նվիրաբերման միջոցով նոր կալվածքների ձեռքբերման հիմնական շարժառիթը: Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի նախաձեռնությամբ և միջոց-

ներով, ինչպես նաև վերջինիս տեսիլքին ականջալուր Սյունյաց իշխանների՝ Փիլիպպեի որդի Աշոտ գահերեց իշխանի, նրա «մեծահաւատ» տիկնոջ՝ Շուշանի, Գեղարքունյաց տեր Գրիգոր Սուփանի և Բաղքից Ձագիկի նյութական օժանդակությամբ, Սմբատ Ա Բագրատունու թագավորության (890-914 թթ.) և Գևորգ Բ Գառնեցու հայրապետության (877-897 թթ.) օրոք՝ 895 թ., 4-5-րդ դդ. խարխուլ եկեղեցու տեղում մեկնարկում է վանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցու շինարարությունը: Տաճարի պատմավիմագրագիտական և արվեստաբանական քննությունը պարզում է հայկական ճարտարապետության, քանդակագործության, որմնանկարչական արվեստի՝ Սյունյաց դպրոցի հետ առնչվող մի շարք մանրամասներ ինչպես զարգացած, այնպես էլ՝ ուշ միջնադարի համապատկերում: Նորահայտ վիմագրի հիմամբ պարզվում է տաճարի եթե ոչ ճարտարապետի, ապա առնվազն քանդակագործի՝ Եղիա (կամ՝ Եղիշէ) վարդապետի անունը, գրավոր աղբյուրների և քանդակների պատկերագրության քննությամբ հստակեցվում է նաև տաճարի գմբեթի վերակառուցման հավանական ժամանակը, այն է՝ 18-րդ դարի առաջին քառորդ:

1.3. Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. Եպիսկոպոսանիստ կենտրոն դառնալուց հետո՝ 844 թ., Սյունյաց Փիլիպպե իշխանն իր սեփական կալվածք հանդիսացող Տաթև գյուղը վանքին իբրև հոգեբաժին է անում, իսկ հին եկեղեցու հարավային պատին կից նախաձեռնում Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությունը (848 թ.), որի մուտքի դիմաց էլ հետագայում նա ամփոփվել է: Այս եկեղեցին քանիցս խոնարհվել ու վերաշինվել է: Հավանական է, որ այն սկզբնապես փայտածածկ է եղել, որը հրկիզել են 1046 թ. վանք ներխուժած պարսից ասպատակիչները: Սյունյաց առաջնորդ Հովհաննես Բ եպիսկոպոսը կարողացել է երկրի առաջադեմ այրերի օժանդակությամբ վերաշինել թալանված ու ավերակված վանական համալիրը, այդ թվում նաև՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որտեղ ամփոփել է Սբ Գրիգոր Լուսավորչի մասունքներից: Հովհաննես եպիսկոպոսի վերաշինած եկեղեցին մեծապես տուժել է նաև Գանձակի 1139 թ. ավերիչ երկրաշարժից, որից հետո այն ի հիմանց վերակառուցվել է միայն 13-րդ դարավերջին՝ Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ, որի անվանակիր 1295 թ. վայելչագիր արձանագրությունն այսօր էլ հարդարում է տաճարի միակ արևմտյան մուտքի բարավորը: Եկեղեցու արևելյան կրկնախաչ լուսամուտների առկայությունը թույլ է տվել հետազոտողներին ենթադրել, որ ինչպես Արենիի Սբ Աստվածածին եկեղեցու (1321 թ.), այնպես էլ ավելի վաղ՝ Տաթևում կառուցված եկեղեցու ճարտարապետը շնորհաշատ Մոմիկն է:

1.4. Սբ Աստվածածին վերդարպասյա եկեղեցին. Հայ միջնադարյան ճարտարապետության եզակի դրսևորումներից են վերդարպասյա եկեղեցիները, որոնք մասնագիտական գրականության մեջ հաճախ սխալմամբ նույնացվել են կրկնահարկ եկեղեցիների հետ: Իրականում դրանք տարբեր կառույցներ են, որոնցից վերդարպասյա եկեղեցիներն ավելի վաղ են ի հայտ եկել հայկական ճարտարապետության մեջ: Հնագույններից մեկը Տաթևի վանքի Սբ Աստվածածին գմբեթավոր եկեղեցին է (1087 թ.)՝ կառուցված առաջին հարկաբաժ-

նի մասը հանդիսացող կամարակապ դարպասի և դրան կից միանավ, թաղակապ տապանատուն-եկեղեցու միասնական հարթ տանիքի կենտրոնում: Ընդունված է ասել, որ վերդարպասյա եկեղեցիների հորինվածքային լուծման հիմքում Երկնային Երուսաղեմի գաղափարն է, որը միաժամանակ պարսպակից դարպասը պաշտպանելու գործառույթ է ունեցել: Ակնհայտ է, որ այն աղերսվում է փոքր տաճարներով պսակված հունահռոմեական դամբարանների հետ, երբ ընդգծվում էր նաև վերնահարկում գտնվող եկեղեցու ուղղակի կապը դամբարանի հետ, որի ենթատեքստում Քրիստոսի Համբարձման գաղափարն էր: Սյունյաց Գրիգոր եպիսկոպոսի նախաձեռնությամբ՝ 1087 թ. կառուցված Տաթևի վանքի Սբ Աստվածածին եկեղեցին եզակի է իր տեսակում, սակայն Սյունյաց 11-րդ դարի ճարտարապետությանը խորթ չէին համանման կառույցները, որպիսիք հայտնի են Վահանավանքի և Ցաղաց քարի վանական համալիրներից:

1.5. Գավիթը և սյունասրահը. Միջնադարյան Հայաստանի վանական համալիրները, որպես կանոն, պարսպափակ հուշարձանախմբեր էին՝ բաղկացած ոչ միայն մեկից ավելի մեծ ու փոքր եկեղեցիներից, այլև վանական, տնտեսական և օժանդակ այլ կառույցներից: Իբրև այդպիսին, հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից են գավիթներն ու արտաքին սյունասրահները, որոնք Սյունյաց վանական համալիրներում հանդիպում են դեռևս 10-11-րդ դարերում (Տաթև, Վահանավանք, Բղենո Նորավանք, Գնդեվանք, Ցաղաց քար, Որոտնավանք):

Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Տաթևի վանքի Կաթողիկե եկեղեցու կառուցումից անմիջապես հետո վանքը պարսպապատվել և համալրվել է այլ շենք-շինություններով, այդ թվում՝ եկեղեցուն արևմուտքից կից գավթով: Այս տեսանկյունից սխալված չենք լինի, եթե ասենք, որ Տաթևի վանքի գավիթը, որը, ըստ արխիվային լուսանկարների, ուղղանկյուն հատակագծով և երկթեք ծածկով կառույց է եղել, հայկական ճարտարապետության եթե ոչ վաղագույն, ապա վաղագույն գավիթներից մեկն էր: Խարխուլ վիճակում գտնվող գավիթը, որը ծառայել է նաև Սյունյաց հոգևոր և աշխարհիկ վերնախավի համար իբրև դամբարան, քանդել են 1890-ական թթ. սկզբներին՝ տեղում կառուցելով եռահարկ զանգակատունը:

Ինչպես 19-րդ դարի տեղագրական աշխատությունների, այնպես էլ հին լուսանկարների միջոցով կարելի է վավերացնել նաև գավթի որմերին ամփոփված վիմագրերն ու ագուցված խաչքարերը: Վաղագույնները թվագրելի են 10-րդ դարով, ինչով և վերահաստատվում են պատմագրի հաղորդած տեղեկությունները:

Սյունյաց Սմբատ Բ թագավորի օրոք՝ 1043 թ., վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի հոգածությամբ Տաթևում կառուցվել է նաև երկրորդ գավիթը՝ կամարակապ սյունասրահի հորինվածքով: Այն ծառայել է նաև իբրև տապանատուն, որտեղ հետագայում ամփոփվել է Սբ Գրիգոր Տաթևացին (1409 թ.): Վիմագրական աղբյուրների հաղորդմամբ՝ գավիթ-սյունասրահը վերստին նորոգվել է 1605 թ., թերևս, վանահայր Տեր Եղիշեի հոգածությամբ, իսկ մեզ չհասած 1902 թ. ևս երկու վիմագիր վկայում են գավիթ-սրահի նորոգումը ծա-

գումով Բաքվից Լյուդվիգ Հարությունյան-Սարգսյանցի և տոլորսեցի Սերգեյ Տեր-Մինասյանի միջոցներով:

1.6. Զանգակատունը. Հայ միջնադարյան ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից են նաև զանգակատները: Փայտաշեն, քառասյուն աշտարակներին կամ, պարզապես, կոչնակներին 11-րդ դարից ի վեր փոխարինելու են գալիս քարաշեն զանգաշտարակները, որոնք կամ քառամույթ գավիթների մասն էին և սյունազարդ ռոտոնդայով հարդարում էին գավթի տանիքը (Հոռոմոս, Գանձասար, Հաղարծին, Հովհաննավանք), երբեմն՝ ճակատային մասը (Մշո Սբ Կարապետ, Սբ Առաքելոց և այլն), կամ էլ վանքի տարածքում այդ նպատակով առանձին շենք էր կառուցվում (Սրբանեսի վանք, Քոբայրավանք, Սանահին, Հաղբատ և այլն):

Տաթևի վանքի գավթի հետ միասին 1890-ական թթ. սկզբներին քանդել են նաև հին զանգակատունը, որը, դատելով հին լուսանկարներից, 17-18-րդ դդ. պետք է վերակառուցված լիներ: Այն, որ Տաթևի վանքն ավելի վաղ է զանգակատուն ունեցել, վկայում են 1302 և 1304 թթ. պղնձե զույգ արձանագիր զանգերը, որոնք ձոնված են նաև պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հիշատակին: Սա կարևոր կռվան է Տաթևի վանքի երբեմնի զանգակատունը թվագրելու դեռևս 14-րդ դարասկզբով, այլ ոչ նույն դարավերջով, ինչպես որ ենթադրվել է ուսումնասիրողների կողմից, քանի որ Հովհան Որոտնեցին նորակառույց զանգակատան օրհնության կարգին նվիրված ճառ ունի: Ինչ վերաբերում է 1890-ականներին կառուցված եռահարկ զանգակատանը, ապա այն ճարտարապետորեն որևէ աղերս չի ունեցել բուն հուշարձանախմբի հետ, խոնարհվել է 1931 թ. ավերիչ երկրաշարժից, իսկ ներկայում վերականգնել են միայն առաջին հարկաբաժինը:

1.7. Սբ Գրիգոր Տաթևացու մատուռ-դամբարանը. 18-րդ դարի եկեղեցական ճարտարապետության եզակի հուշարձաններից է Տաթևի վանքում՝ Սբ Գրիգոր Տաթևացու գերեզմանին կառուցված մատուռ-դամբարանը: Եթե վաղ միջնադարում թաղակապ, փոքր դամբարաններն ու մասունքարանները կառուցվում էին հիմնականում եկեղեցիների ավագ խորանների տակ կամ դրանց կից (Աղցք, Ջրվեժ, Ջովունի, Թալին, Նախճավան, Կարենիս, Օշական, Վաղարշապատի Սբ Հռիփսիմե, Սբ Գայանե, Տիգրանակերտ, Ամարաս, Վաճառ և այլն), ապա զարգացած և ուշ միջնադարում դրանց ինչ-որ տեղ փոխարինելու են գալիս թաղակապ, փոքր տապանատները:

Սկզբնաղբյուրների հաղորդմամբ՝ Տաթևի մատուռ-դամբարանը կառուցվել է Գրիգոր Տաթևացու մահից (1409 թ.) շուրջ չորս հարյուրամյակ անց՝ 1787 թ., Տաթևի վանահայր Հովակիմ արք. Անգեղակոթցու նախաձեռնությամբ, բռնակոթցի երեք քահանաների և տեղի ժողովրդի միջոցներով: Այդ մասին վկայված է ոչ միայն դամբարանի շինարարական վիմագրում՝ պահպանված հարավային և արևմտյան որմերին՝ արտաքուստ, այլև՝ Բռնակոթ գյուղի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսարևելյան մույթի հարավային նիստին՝ 37 տողից: Վիմագրերը գրեթե նույնաբովանդակ են, ինչը հայ վիմագրության մեջ յուրօրինակ երևույթ է:

1.8. Պարսպակից կառույցները և ձիթհանը. Միջնադարյան վանքերն աչքի են ընկել նաև պարսպափակ համալիրներ լինելով, իսկ հուշարձանախումբը պարսպապատվում էր, քանի որ վանականները պիտի արտաքին աշխարհից հնարավորինս առանձնացված-մեկուսացված լինեին, էլ չասենք նաև՝ պաշտպանված: Այն, որ Տաթևի վանքը Սբ Առաքելոց եկեղեցու կառուցումից անմիջապես հետո (906 թ.) պարսպապատվել ու համալրվել է նաև վանական, տնտեսական և օժանդակ այլ շինություններով, վկայում է դեռևս Ստեփանոս Օրբելյանը, համաձայն որի՝ Սյունյաց առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը վանքում կառուցել է նաև աղոթատուն-դամբարան (գավիթ), սեղանատուն, ամբարանոց, գրատուն, գործատներ, միաբանական խցեր, պաշտպանության համար գաղտնարաններ և այլն: Փաստելի է, որ Տաթևի վանքի պարսպակից ներկայիս համակառույցը, ինչպես նաև վանքապատկան այլ տնտեսական շենքերը (ձիթհան, աղբյուր, մարագ) թվագրվում են հիմնականում 17-19-րդ դդ. և հետագա վերանորոգումների արդյունք են: Այդ են վկայում ոչ միայն կառույցների որմերին պահպանված վիմագրերը, այլև՝ Ստեփանոս Օրբելյանի պատմագրքին կից Քոթուկի հիշատակագրությունները:

Ինչ վերաբերում է պարսպակից մուտքերի տեղադրությանն ու դրանց կառուցման ժամանակին, ապա հին մուտքը, որը սկզբնապես գտնվելիս է եղել պարսպի արևմտյան կողմում, 11-րդ դարում տեղափոխել են պարսպի արևելյան հատված՝ կից կառուցելով թաղակապ տապանատուն-եկեղեցի, իսկ վերնահարկում՝ գմբեթավոր եկեղեցի: Վանքի ներկայիս՝ գործող մուտքը բացվել է 1875-ին, որի համար իբրև կամարակապ դարպաս է ծառայել 18-րդ դարում կառուցված պարսպակից աղբյուրը, որն իր զուգահեռն ունի Տաթև գյուղի սկզբնամասում՝ կառուցված 1745 թ.:

Հայաստանի արտադրական կառույցների շարքում Տաթևի ձիթհանը հատուկ ուշադրության է արժանի: 18-րդ դարով թվագրվող կառույցը քանիցս նորոգվել, իսկ վերջին տարիներին ամբողջովին վերականգնվել է որպես ժամանակակից՝ ինտերակտիվ թանգարան: Հայաստանում թեև գերակշռել են միասրահ ձիթհանները, երբ ողջ գործընթացը կատարվել է մեկ ընդհանուր սենյակում, սակայն Արցախում և Սյունիքում ձիթհանները, սովորաբար, երկսրահ են՝ իրար հետ միացված ներքին դռնով, ինչպես որ Տաթևի ձիթհանն է:

1.9. Կոթողային հուշարձանները. Հայ միջնադարյան քարարվեստի ինքնատիպ դրսևորումներից են նաև կոթողային հուշարձանները (քառանիստ կոթողներ, հուշասյուներ, հուշակառույցներ, թևավոր խաչեր, խաչքարեր, տապանաքարեր և այլն), որոնք միջնադարի տարբեր շրջափուլերում ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները: Տաթևի վանքը ևս ներկայանալի է իր կոթողային մշակույթով, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ մենք գործ ունենք վաղ շրջանի դասական ճարտարապետության և կոթողային արվեստի վերականգնման ակնհայտ փորձերի հետ, որոնք դրսևորվել են ինչպես եկեղեցական ճարտարապետության մեջ՝ արևելյան խորշեր, լուսամուտների պարակալներ և այլն, այնպես էլ՝ կոթողային արվեստում՝ հուշասյուն, հուշակառույց, թևավոր խաչ և այլն: Իբրև այդպիսին, նշելի է Սբ Եվստաթեոս

առաքյալին վերագրվող հուշակառույցը, որի լավագույն զուգահեռը Աղիտուի՝ Սբ Խաչի պաշտամունքին նվիրված վաղմիջնադարյան հուշակառույցն է, կամ Սբ Երրորդությանը նվիրված գավազանակերպ ճոճվող սյունը, որը վաղմիջնադարյան քառանիստ կոթողների առավել կատարյալ օրինակներից է՝ կանգնեցված 895-904 թթ., կամ էլ՝ շուրջ 2 մ բարձրության թևավոր խաչը, որը, ըստ ամենայնի, կանգնեցվել է Սբ Եվստաթեոսին վերագրվող հուշակառույցի երկրորդ հարկաբաժնում՝ դրանով իսկ վավերացնելով Տաթևի հուշակառույցի՝ դարձյալ Սբ Խաչի պաշտամունքին նվիրված լինելը: Մենք սա լիովին տրամաբանական ենք համարում ոչ միայն նրա համար, որ Սբ Եվստաթեոսի գոյությունն ավանդական ենք դիտարկում, այլև նկատի ենք առնում Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունները՝ կապված Տաթևի վանքում կենցաղավարած Սբ Խաչի պաշտամունքի և տեղում ամփոփված խաչափայտի մասունքի հետ:

Տաթևի կոթողների շարքում բացառիկ նշանակություն ունի նաև ներկայում վանքի պարսպակից թանգարանում ցուցադրվող արձանագիր կոթողը, որն առաջին հայացքից որմնամույթի խարիսխ կամ սյան պատվանդան է հիշեցնում: Կոթողի նշանակությունը պարզելուն մեծապես օգնում է զույգ նիստերին պահպանված արձանագրությունը, ըստ որի՝ այն կանգնեցվել է ծագումով նիկոմիդացի բժիշկ, համաքրիստոնեական սուրբ Պանդալեոնի անվամբ (մոտ 275-305 թթ.)՝ Գիորգ հազարապետ-կրոնավորի նախաձեռնությամբ: Մատենագրությունից հայտնի է, որ Սբ Պանդալեոնի պաշտամունքն առավել տարածված է կրել Արցախում, սակայն փաստելի է, որ Սբ Պանդալեոնը պաշտվել է նաև Սյունիքում. այդ է վկայում ոչ միայն Տաթևի վանքից հայտնի վերոնշյալ վիմագիրը, այլև միևնույն վանքից Հայաստանի պատմության թանգարան տեղափոխված արծաթյա, ականակուռ խաչ-մասունքարանի 1762 թ. արձանագրությունը՝ չորս սրբերի շարքում նաև Սբ Պանդալեոնի անվան հիշատակմամբ: Կոթողը թվակիր չէ, սակայն դատելով արձանագրության հնագրական հատկանիշներից և վանքի վաղ շրջանի վիմագրերի հետ զուգահեռներից՝ թվագրելի է առնվազն 10-րդ դարով:

Առանձնանշելի են նաև Տաթևի վանքի խաչքարերը, որոնց համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ վանքի խաչքարային մշակույթը ներկայացված է ինչպես թևավոր խաչերի, այնպես էլ հուշարձանախմբի որմերին ագուցված և պատվանդաններին կանգնեցված խաչքարերի տեսքով: Դրանք աչքի են ընկնում ոչ միայն քանդակային արվեստի ինքնատիպ լուծումներով, այլև մեծամասամբ արձանագիր լինելով, որոնց բովանդակությունն օգնում է նաև կոթողների ճշգրիտ թվագրմանը: Տաթևում 9-10-րդ դդ. թվագրվող խաչքարերը, դատելով ծավալային համաչափություններից և պատվանդաններին կցվող ելուստների բացակայությունից, ըստ ամենայնի, ագուցված են եղել գլխավոր եկեղեցու և արևմուտքից կից երբեմնի գավթի որմերին: Նկատելի է, որ վաղմիջնադարյան քանդակի այգային հորինվածքները բոլորովին նոր կերպավորում են ստացել խաչքարային մշակույթի հատկապես տաթևյան օրինակներում՝ արտահայտված հիմնականում ետնախորքը բոլո-

րող խաղողի որթագալարի կամ փարթամ արմավազարդի տեսքով, իսկ թևավոր խաչերի դեպքում՝ խաչաթևերի բուսականացման և ետնախորքի հեռացմամբ ստացված արմավազարդերով, որպիսիք հայտնի են նաև Վահանավանքից, Ցաղաց քարից և ժամանակամերձ այլ հուշարձաններից:

Դառնալով վանքի տապանաքարային մշակույթին՝ հարկ է արձանագրել, որ այն համեմատաբար զուսպ է արտահայտված: Դա, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ վանքի հանգստարանները հիմնականում գտնվելիս են եղել գավիթներում և վերդարպասյա եկեղեցու առաջին հարկաբաժնի մասը հանդիսացող թաղակապ դամբարանում, որոնք ժամանակին ավերվել ու մեծապես վնասվել են: Այդուհանդերձ, ուսումնասիրությունները պարզում են, որ վանքում են թաղվել ոչ միայն տեղի նշանավոր հոգևորականներից ու րաբունապետներից շատերը, այլև՝ աշխարհիկ նշանավոր անձինք՝ թագավորներ, իշխաններ և այլք: Օրինակ, վանքի երբեմնի գավթում են ամփոփվել Սյունյաց երևելի առաջնորդ, վանքի հիմնադիր Տեր Հովհաննես եպիսկոպոսը († 918 թ.), Սյունյաց թագավորության առաջին գահակալներ Սմբատ Ա-ն († 998 թ.), Վասակը († 1040 թ.), ավելի ուշ նաև՝ Տարսայիճ Օրբելյանի կին և Ստեփանոս Օրբելյանի մայր Արուզ խաթունը († 1286 թ.), ավելի ուշ՝ րաբունապետ Ներսես եպս. Տաթևացին († 1655 թ.), սյունասրահում է ամփոփվել Սբ Գրիգոր Տաթևացին († 1409 թ.) և ուրիշներ:

1.10. Եկեղեցական արձանագիր առարկաները. Տաթևի վանքի 17-18-րդ դդ. պատմության ուսումնասիրման համար մեծապես կարևորվում է նաև եկեղեցական արձանագիր առարկաների հավաքածուն, որը բաղկացած է ինչպես մետաղե (հիմնականում՝ արծաթ կամ ոսկեջուր) սպասքից (մասնատուփ, ձեռաց խաչ, խնկաման, ծնծղա, պնակ, սկիհ և այլն), այնպես էլ ասեղնագործ հանդերձանքից (վակաս, ուրար, շուրջառ, եմիփորոն և այլն): Դրանց զգալի մասը Խորհրդային տարիներին փոխադրվել է Հայաստանի պատմության թանգարան, որտեղ դրանք ուսումնասիրել և արձանագիր օրինակները հրատարակել է Եվգինե Մուշեղյանը (29 միավոր):

Մինչև վերջերս Տաթևի վանքում էր պահվում նաև 18-րդ դարի երկրորդ կեսով թվագրվող պղնձե արձանագիր պնակների մի հավաքածու՝ թվով տասը, որոնցից երկուսն այժմ ցուցադրվում են վանքի պարսպակից թանգարանում: Դրանցից երկուսի արձանագրությունները կրկնում են միմյանց, իսկ մյուսները հայտնում են նվիրատուների անունները, տարեթիվը և այն անձի անունը, որի միջոցով առարկան նվիրաբերվել է վանքին: Պնակները պղնձե, պրոտոկոնաձև սաղր թասեր են, ունեն օղակաձև նստուկ և տափակ, լայն շուրթ՝ հարդարված պարզունակ ակոսագծերով, անագապատ են, որը երբեմն տեղ-տեղ թափված է, նստուկների կենտրոնում՝ արտաքուստ, առկա է վարպետի կամ տվյալ արհեստանոցի դրոշմը, իսկ միատող արձանագրությունները տեղ են գտել հիմնականում շուրթին՝ արտաքուստ, սակավ նաև՝ ներքուստ, փորագիր և ելնդագիր եղանակով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ՝ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրները միաժամանակ նաև գրչության և ուսումնագիտական խոշոր կենտրոններ էին, որոնց հովանու ներքո են գործել ժամանակի հայտնի դպրոց-վարդապետարաններն ու համալսարանները (Սևանավանք, Մաքենյաց վանք, Աղբերց վանք - Գլաձոր, Հերմոն, Որոտնավանք, Տաթև և այլն): Այդ կենտրոններում դասավանդվում էր նաև գրչության արվեստ, իսկ գրատներում ու եկեղեցիների ավանդատեղյակներում ընդօրինակվում, նկարազարդվում, կազմվում ու պահվում էին հարյուրավոր ձեռագրեր՝ համախմբելով հայ գրչարվեստին մասնակից անձանց:

2.1. Տաթևի վանքում և համանուն անապատներում ընդօրինակված ձեռագրերը. Այն, որ Տաթևի գրչության դպրոցն ի սկզբանե բավականին բեղուն է գործել, վկայում է Ստեփանոս Օրբելյանի հաղորդումն առ այն, որ սելջուկյան ամիրա Ելտկուզ աթաբեկի զորքերի կողմից 1170 թ. Բաղաբերդի ամրոցի գրավման հետևանքով ոչնչացվեցին Տաթևի վանքից այնտեղ ի պահ տրված եկեղեցական արժեքավոր առարկաներ, սրբություններ և ավելի քան տասը հազար ձեռագիր: Պատմագրի այս տեղեկությունը վավերացվում է նաև մերօրյա ուսումնասիրություններով, երբ կարելի է արձանագրել, որ վանքում գրչագրված և մեզ հասած ձեռագրերը 13-րդ դարից վաղ չեն: Մեր ուսումնասիրությունների արդյունքում ամբողջացրել և ցուցակագրել ենք Տաթևի վանքում և համանուն անապատներում՝ 13-19-րդ դդ. ընդօրինակված, նկարազարդված, վերակազմված, նաև՝ Տաթևի գրչության դպրոցին վերագրելի 131 միավոր ձեռագիր՝ ընդգրկված ինչպես Մաշտոցյան Մատենադարանի, այնպես էլ աշխարհի տարբեր ձեռագրական հավաքածուներում: Վաղագույնը Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական ձեռագրական հավաքածուի 1282 թ. Ժողովածուն է (ՖԱԳ 302)՝ ընդօրինակված Մատթեոս վարդապետ գրչի ձեռքով, Սիսական աշխարհի գերահռչակ վանքում, որ մականվամբ Տաթև է կոչվում:

2.2. Սյունյաց մանրանկարչության Տաթևի դպրոցը. Հայ ձեռագիր գիրքը, իբրև մշակութային արժեք, աչքի է ընկել ոչ միայն բովանդակային խորությամբ (պատմական, աստվածաբանական, քերականական և այլն) կամ պահպանված հիշատակարանների աղբյուրագիտական արժեքով, այլև՝ գեղարվեստական հարդարանքով, ի մասնավորի՝ մանրանկարչական և կազմարարական արվեստով: Տաթևի գրչության դպրոցից հայտնի ձեռագրերի բովանդակային առանձնահատկություններն ինքնին թույլ են տալիս ենթադրել, որ այս կենտրոնում ստեղծված գրչագրերը մանրանկարչությամբ առանձնապես հարուստ չպետք է լինեն, քանի որ մեզ հասած ձեռագրերի գերակշիռ մասը բովանդակությամբ դավանաբանական, իմաստասիրական, փիլիսոփայական, աստվածաբանական քարոզներ ու մեկնություններ են, որոնք ճոխ մանրանկարչությամբ ուղեկցվել չէին կարող: Այդուհանդերձ, Սյունյաց մանրանկարչության Տաթևի դպրոցը ևս չի վրիպել հայ և օտարազգի արվեստաբանների ուշադրությունից, որին սակավ, բայց անդրադարձներ եղել են: Տաթևում ձեռագրեր են ծաղկել Աբրա-

համ Բոլորաբերդցին, Նաղաշ Հայրապետը, Գրիգոր Տաթևացին, աշակերտ Խոցաղեղը, Թումա Կաֆայեցին, Ղազարը և այլք:

2.3. Հիշատակարանների աղբյուրագիտական արժեքը. Տաթևի գրչության դպրոցից հայտնի ձեռագրերի ժամանակագրական, բովանդակային առանձնահատկությունները, այդտեղ գործած գրիչների, ծաղկողների, կազմարարների, պատվիրատու-ստացողների մասին հայտնի տեղեկությունները մեզ են հասել բացառապես նույն այդ ձեռագրերում պահպանված գրչության և հետագայի հիշատակարանների շնորհիվ: Բարեբախտաբար, ձեռագրերի հիշատակարաններում գրիչները, որպես կանոն, հիմնականում հիշատակում են իրենց անուններն ու ձեռագրի գրչության տեղն ու ժամանակը: Կան հիշատակարաններ, ուր վկայված են նաև գրչության գործի մյուս մասնակիցների անունները, երբեմն էլ գրիչը մանրամասներ է հաղորդում երկրի քաղաքական, տնտեսական հարցերի, կենցաղային դժվարությունների, բնական աղետների և այլ խնդիրների շուրջ:

Տաթևի վանքից և համանուն անապատներից հայտնի ձեռագրերը, կարելի է ասել, հիմնականում ունեն ինչպես գրչության ժամանակի, այնպես էլ հետագայի հիշատակարաններ: Ավելին, մեզ են հասել նաև ձեռագրեր, որոնց ընդօրինակման համար իբրև գաղափար, այսինքն՝ նախօրինակ են հանդիսացել Տաթևում երբեմնի գրչագրված ձեռագրերը, ուստի բուն բովանդակությանը զուգահեռ, գրիչներն արտագրել են նաև հիմք օրինակի հիշատակարանները: Նման հիշատակարանները հնարավորություն են տալիս պարզելու տվյալ գրչության կենտրոնում ավանդական դարձած ձեռագրերի թեմատիկ առանձնահատկությունները, ժամանակագրորեն առավել բեղուն շրջափուլերը, ինչպես նաև՝ գործած անձանց, դեպքերն ու իրադարձությունները:

Ինչ վերաբերում է Տաթևում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններին բնորոշ կաղապարային առանձնահատկություններին, ապա կարելի է առանձնացնել վանքի անունը Սբ Եվստաթեոսի հետ աղերսելու հայտնի միտումը, որն ընդգծված է հենց 15-րդ դարից ի վեր գրչագրված հիշատակարաններում, կամ վանքում 9800 սրբոց մասունքներ պահվելու մասին վկայությունները, վանքն իբրև Գրիգոր Տաթևացու մենաստան կոչելը և այլն:

2.4. Տաթևի գրատուն-մատենադարանը. Միջնադարյան Հայաստանի վանքերը նաև ձեռագրերի պահպանության հիմնական հավաքատեղին էին, որտեղ դրանք պահվել են ոչ միայն արկղերում, խցերում կամ եկեղեցիների ավանդասենյակներում, այլև հենց այդ նպատակով կառուցված գրատուն-նշխարատներում: Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ գրատուն է ունեցել նաև Տաթևի վանքը, որը կառուցվել է վանքի ծաղկման սկզբնական շրջանում՝ 10-րդ դարասկզբին, երբ գլխավոր Սբ Առաքելոց եկեղեցու կառուցումից հետո (906 թ.) վանքը պարսպապատվել ու համալրվել է նաև այլ շինություններով: 1863-1910 թթ. ընթացքում տարբեր ուսումնասիրողների կողմից կազմվել է Տաթևի գրատան ձեռագրերի ութ համառոտ ցուցակ: Դեռևս 1969 թ. այդ ցուցակների քննությամբ և դրանցում վկայված ձեռագրերի հետագա «ճակատագրով» զբաղվել է ձեռագրագետ Օնիկ Եգանյանը, որը կազմել է Մաշտոցյան Մատենադարանում պահվող Տաթևի գրատան 147 ձեռագրերի արդի և հին

թվահամարների համեմատական աղյուսակը: Այդ ձեռագրերից մեկ տասնյակից ավելին Տաթևի վանքի և համանուն անապատների հետ են առնչվում, իսկ մյուսները՝ տարբեր գրչության կենտրոններում՝ Կարինում, Բաղեշում, Երզնկայում, Էջմիածնում, Նախիջևանում, Կիլիկիայում և այլ վայրերում ստեղծված և հետագայում ինչ-ինչ ճանապարհով Տաթևի գրատան հավաքածուում ընդգրկված տարաբովանդակ, 12-18-րդ դդ. գրչագրեր են:

Մաշտոցյան Մատենադարանում պահվող տաթևապատկան ձեռագրերի իրական թիվը պիտի համարել 155-ը, որոնցից 142-ը ժամանակին արտացոլվել են վերոնշյալ ձեռագրացուցակներում, իսկ 13-ը՝ ոչ: Բացառիկ է Գրիգոր Տաթևացու ինքնագիր, ոսկեկազմ Ավետարանը՝ ընդօրինակված 1374 թ. Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան վանքում: Ավետարանը Տաթևից նախ տարվել է Թավրիզ, իսկ 1950-ականների սկզբներին նվիրաբերվել Մայր Աթոռ Սբ Էջմիածնին, ուր և այսօր պահվում է (Հմր 96): Հիշատակարանային տվյալները թույլ են տալիս արձանագրել, որ տաթևապատկան է եղել նաև ներկայում Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի մատենադարանի Հմր 474-4 (157) մեծադիր մագաղաթյա Ավետարանը, որը թվագրվում է 10-11-րդ դդ. և հայտնի է իր հրաշագործություններով, որի համար և կոչվել է «Հոգի փչող» Ավետարան:

2.5. Տաթևի դպրոց-վարդապետարանը և համալսարանը. 9-րդ դարի առաջին կեսին Սյունյաց եպիսկոպոսանիստ կենտրոնի փոխադրումը Շաղատից Տաթև, մշակութային մի նոր վերելքի առիթ է հանդիսացել: Տաթևի դպրոց-վարդապետարանը կարճ ժամանակահատվածում մեծ համբավ է ձեռք բերել, որը, սակայն, քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, տևական կյանք չի ունեցել: Այն բոլորովին նոր կարգավիճակ է ունեցել միայն 14-րդ դարի երկրորդ կեսին՝ պայմանավորված Գլաձորի համալսարանի՝ տեղից տեղ փոխադրվելու հետ: Այս տեսանկյունից պիտի արձանագրենք, որ Գլաձորի համալսարանի ավանդները կրողն ու շարունակողը եղավ Տաթևի համալսարանը, որի հիմնադրմամբ՝ Տաթևի ուսումնագիտական կենտրոնը երկրորդ ծաղկումն ապրեց՝ ի դեմս մեծ իմաստասերներ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու: Արդարև, Տաթևում համալսարանական կրթության գործի նախաձեռնողը Գլաձորի շրջանավարտ Հովհան Որոտնեցին էր: Տաթևի համալսարանի ռաբունապետներից Մատթեոս Ջուղայեցու հաղորդմամբ՝ հենց Հովհան Որոտնեցին է առաջարկել Գրիգոր Տաթևացուն ստանձնել Եսայի Նչեցու համալսարանի ռաբունապետությունը: Որոտնեցու մահից հետո (1386 թ.) համալսարանի ռաբունապետությունը ստանձնել է ուսուցչի արժանի հետնորդը՝ մեծավանդ փիլիսոփա և աստվածաբան Գրիգոր Տաթևացին: Շուրջ երկու տարի հետո նա համալսարանը Ապրակունյաց վանքից տեղափոխել է Տաթև՝ տեղում ծավալելով ուսումնագիտական և գրչական բուռն գործունեություն:

Փաստելի է, որ մեծ ուսուցչապետի՝ Գրիգոր Տաթևացու վախճանից հետո (1409 թ.), չնայած սաների գործադրած ջանքերին, քաղաքական անբարենպաստ իրավիճակը և Լենկ Թեմուրի որդիներից Շահռուխի հաճախակի հարձակումները (1420-1421, 1428, 1435 թթ.), կասեցրել են նաև երբեմնի հզոր համալսարանի գործունեությունը (1435 թ.):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՈՐՈՏԱՆԻ ԿԻՐՃԻ՝ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀԻՆ ԳՅՈՒՂԱՏԵՂԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբնաղբյուրների հաղորդմամբ՝ առնվազն 9-րդ դարի առաջին կեսից, երբ Սյունյաց եպիսկոպոսանիստը Շաղատից տեղափոխվել ու հաստատվել էր Տաթևում, վանքն աստիճանաբար ձեռք է բերել նոր կալվածքներ: Որոտանի կիրճի գրեթե բոլոր գյուղերն ու ագարակները գնման ու նվիրաբերման միջոցով դարձել էին վանքապատկան: Պատահական չէ, որ հարկատվության պահանջը հաճախ գյուղացիների ըմբոստության առիթ է դարձել, որի առհավատչյան հարևան Ցուր, Տամալեկ, Բերդ-Ավելադաշտ, Ցողունի գյուղերի բնակչության ընդվզումն էր Տաթևի վանքի միաբանության դեմ, որը մանրամասն նկարագրել է Ստեփանոս Օրբելյանը:

3.1. Տաթևի վանքապատկան և հարկատու գյուղերի ցուցակները. Ստեփանոս Օրբելյանի պատմագրքին կից է Տաթևի վանքապատկան և հարկատու գյուղերի մի ընդարձակ ցուցակ՝ ըստ Սյունյաց տասներկու գավառների և գյուղերի՝ շուրջ 700 անուն-միավոր: Ուսումնասիրողների կարծիքով՝ Տաթևի վանքապատկան, այսինքն՝ վանքին նվիրաբերված կամ իբրև կալվածք տրված գյուղերի և ագարակների թիվը հասել է շուրջ 50-ի, որոնցից միայն 25-ն էին գյուղ:

17-րդ դարավերջին կազմվել են Տաթևի վանքապատկան և հարկատու գյուղերի պտղի և հուլավարի նոր ցուցակները: Այս շրջանում էապես նվազել է գյուղերի ընդհանուր թիվը՝ հասնելով 264-ի, հարկը դրամ-դահեկանի փոխարեն գանձվել է հիմնականում պարսկական շահիով, երբեմն էլ՝ աբասիով, իսկ Բարկուշատ գավառի (Բաղքի արևելյան մասը) երեսունմեկ գյուղերից գանձվող բնամթերքը՝ նաև մարգանով ու չարեքով:

Որոտանի կիրճի հին գյուղերը տեղակայված են եղել գետի ձախափնյա, երբեմն ապառաժներով պաշտպանված տափարակ վայրերում՝ շրջապատված խաղողի և պտղատու այգիներով: 1960-ականներին ինչպես Հալիձորը, այնպես էլ հովտի մյուս գյուղերը՝ Խոտը, Շինուհայրը, իսկ Հարժիսն անմիջապես 1931 թ. երկրաշարժից հետո տեղափոխվել են դեպի վեր՝ հյուսիս, ձորից դուրս բերվելով հարթավայրեր:

3.2. Տաթև. Տաթև գյուղը, որից վանքն այսօր ստացել է նաև իր անունը, պատմական Սյունյաց նահանգի Ծղուկ գավառի հնամենի բնակավայրերից է, որը Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում հիշատակված է 10 միավոր դահեկան հարկով: Գյուղում փաստագրվել են դեռևս նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններ (ամրոց, դամբարաններ և այլն), ինչը չի կարելի ասել վաղքրիստոնեական կառույցների մասին, որպիսիք Տաթևից մեզ չեն հասել: Գյուղի արևելյան կողմում կանգուն է Սբ Մինաս եռանավ բազիլիկ եկեղեցին (1646 թ.)՝ կից գերեզմանոցով, վանքից արևմուտք՝ Որոտան գետի Տաթև վտակի վրա, պահպանվել է միաթռիչք կամուրջը (1672 թ.), գյուղի սկզբնամասում՝ կամարակապ աղբյուրը (1745 թ.), իսկ գյուղից մոտ 4 կմ հյուսիս-արևմուտք՝ Պետրոսա-

խաչի բարձունքին, կանգնեցված է 12-13-րդ դդ. թվագրվող մի արձանագիր խաչքար, որի վերնամասն ընկած է բլրի ստորոտին՝ Խոզաղբյուրի նովերի մոտ:

3.3. Հին Հալիձոր. Հին Հալիձորը տեղագրորեն գտնվել է Սյունյաց Հաբանդ գավառում: Հալէ կամ Հալիս անվանաձևերով այն հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի պատմագրքում, իսկ հարկացուցակում վկայված է 8 միավոր դահեկան հարկով: 10-րդ դարասկզբին Սյունյաց Բաբկեն իշխանի դուստր Համասպրուհին Տաթևի վանքին է նվիրել Հալիսի նախ մեծ այգին, ապա գյուղն իր ողջ սահմաններով: Նվիրատվությունը, ի թիվս Սյունյաց վեց գյուղերի, վերահաստատվել է իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի 1274 թ. վճիռ-վկայագրով՝ որպես Տաթևի վանքի սեփականություն, որպիսին մնացել է մինչև 19-րդ դարը: Վճռի ամփոփ տարբերակը վիմագրվել է նաև Տաթևի վանքի Սբ Առաքելոց եկեղեցու հարավային մույթի հյուսիսային նիստին, որից միայն առանձին հատվածներ են պահպանվել: Ավելի ուշ Հալիձորը քանիցս հիշատակված է նաև Տաթևի վանքապատկան գյուղերի պտղի և հուլավարի նոր հարկացուցակներում:

Հալիձորի ժամանակագրորեն վաղագույն միջնադարյան հուշարձանները հին գյուղատեղի շրջակայքում են: Դրանք 13-15-րդ դդ. խաչարձաններ են՝ կանգնեցված «Շրջիկ» կամ «Սոնու խութ», ինչպես նաև «Վնսար» կամ «Խաչի խութ» կոչված վայրերում, իսկ բուն գյուղատեղի կենտրոնում պահպանվել է Սբ Մինաս միանավ բազիլիկ եկեղեցին՝ կառուցված 1611 թ.:

3.4. Հին Շինուհայր. Հին Շինուհայրը Սյունյաց Հաբանդ գավառի և ողջ նահանգի ամենախոշոր գյուղն է, որը, ըստ Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի, Տաթևի վանքին տվել է 24 միավոր դահեկան հարկ: Այսչափ հարկը ևս վկայում է գյուղի մեծության մասին, ուստի պատահական չեն *Շնհեր, Շէնհէր, Շինհեր, Շինոյ հերք, Հայրաշեն* անվանաձևերը, որոնց հիմքում շենների՝ գյուղերի հայր իմաստն է: Շինուհայրն առաջին անգամ հիշատակվում է Աղվանից գահերեց իշխան Վարազ-Տրդատի դստեր՝ Շահանդուխտի թողած նամակի առիթով, ըստ որի՝ իշխանուհին իր ողջ կարողությունը, այդ թվում՝ հողատարածքները՝ Շնհերից մինչև Գինական գետը, շնորհում է կարիքավորներին ու Տաթևի վանքին: Այնուհետ Շինուհայրը դարձյալ հիշվում է Սյունյաց իշխան Փիլիպպեի կալվածքների կազմում, որը նվիրաբերվել է Տաթևի վանքին և, ի թիվս վեց հայտնի գյուղերի, վերահաստատվել իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի 1274 թ. վճռագրով և գրեթե նույնաբովանդակ վիմագրով: Հետագայում այն հիշվում է նաև Տաթևի վանքապատկան գյուղերի պտղի և հուլավարի հարկացուցակներում:

Հին Շինուհայրի Սբ Ստեփանոս եկեղեցուց մոտ 200 մ հարավ-արևելք՝ այգիների մեջ է գտնվում «Խաչեր» կոչվող միջնադարյան փոքր գերեզմանոցը, որի հարավային եզրին դեռ կանգուն է խաչքարային մշակույթի եզակի դրսևորումներից մեկը՝ ձևով նավակաձև, վերևում, թերևս, թևավոր խաչի համար նախատեսված գնդաձև հիմքով մի յուրօրինակ խաչարձան (1261 թ.), որի համար

իբրև պատվանդան է ծառայել բնական ժայռը: Բացառված չէ, որ այն նախաքրիստոնեական կոթող է եղել, որը հետագայում խաչքարացվել է:

Հին Շինուհայրի գրեթե կենտրոնում է գտնվում 17-րդ դարասկզբին կառուցված Սբ Ստեփանոս եռանավ բազիլիկ եկեղեցին, որի որմերի շարվածքում՝ ներքուստ և արտաքուստ, իբրև շինաքար են օգտագործվել ավելի վաղ թվագրմամբ խաչքարեր և տապանաքարեր, մեծ մասը՝ արձանագիր: Սբ Ստեփանոս եկեղեցու պատմության լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն նաև 17-րդ դարում՝ Շինուհայրում ընդօրինակված և մեզ հասած երկու տասնյակից ավելի ձեռագրերն ու դրանց հիշատակարանները:

3.5. Հին Խոտ. Խոտը կամ Խոտավանը Սյունյաց Հաբանդ գավառի հինավուրց գյուղերից է, որը, ըստ հարկացուցակի, Տաթևի վանքին տվել է 12 միավոր դահեկան հարկ: Սյունյաց առաջնորդ Սողոմոն եպիսկոպոսի 871 թվակիր կտակագրում այն հիշատակվում է իբրև կոռավար հող ունեցող գյուղ, որն ավելի վաղ Գևորգ եպիսկոպոսը հոգեբաժին էր արել Տաթևի վանքին, սակայն հետագայում հափշտակվել է անօրենների կողմից և տվյալ կալվածագրով Տեր Սողոմոնը վերահաստատել է վանքի իրավունքներն այդ կոռավար հողի վրա: Այնուհետ Խոտը հիշատակվում է Տաթևի վանքի Սբ Առաքելոց եկեղեցու նավակատիքի արարողության առիթով, իսկ 1046 թ. իշխան Դլեն Խաղբակյանն իր ժառանգական սեփականությունը հանդիսացող Խոտ գյուղն ու Խոտագետի մեծ այգին նվիրաբերել է Տաթևի վանքին, որի դիմաց հնգօրյա պատարագ է ստացել և այն ամրագրել նզովքով ու Սյունյաց առաջնորդ Տեր Հովհաննեսի կնիքով: Նվիրատվությունները վերահաստատվել են նաև իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի 1274 թ. վճռագրով: Ավելի ուշ, Խոտ գյուղը հիշատակվում է նաև Տաթևի վանքի պտղի և հուլավարի հարկացուցակներում:

Հին Խոտի շրջակայքում պահպանվել են դեռևս նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններ (բնակատեղի, դամբարանադաշտ և այլն), սակայն քիչ չեն նաև միջնադարյան հուշարձանները. այստեղից կանգուն կամ ավերված վիճակում մեզ են հասել եկեղեցիներն ու գերեզմանոցը: Վիմագրերով առանձնապես աչքի է ընկնում գյուղատեղի հարավարևմտյան եզրի հին գերեզմանոցը, որի կենտրոնում նկատելի են նաև խոնարհված եկեղեցու հիմնապատերը, որտեղ փաստագրվել են նաև թևավոր խաչերի բեկորներ ու խաչակալներ: Նշելի է նաև Խոտ և Շինուհայր գյուղերի միջնամասում՝ գյուղից մոտ 1 կմ դեպի հարավարևմուտք գտնվող Մրգաձորի Սբ Խաչ միանավ բազիլիկ եկեղեցին (1700 թ.): Ենթադրելի է, որ այդ տեղանքը հարկացուցակում վկայված Մարգաձոր գյուղն է՝ 8 միավոր դահեկան հարկով:

3.6. Հին Հարժիս. Տաթևի վանքապատկան Հարժիս (Հարժիք, Յայջի) գյուղը գտնվել է Սյունյաց աշխարհի Ծղուկ գավառում և, ըստ Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի, վանքին տվել է 10 միավոր դահեկան հարկ: Բնակավայրն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն. գյուղում և շրջակայքում տարբեր առիթներով փաստագրվել են դեռևս նախաքրիստոնեական հուշարձաններ՝ ամրոց, բնակատեղի, դամբարանադաշտ, մենհիրներ, ցից քա-

ներ, մարդադեմ, մարդագլուխ և մարդամարմին կոթող-կուռքեր, որոնք թվագրելի են առնվազն բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանով:

Տաթևի վանքի Սբ Առաքելոց եկեղեցու շինարարական աշխատանքներից հետո՝ 906 թ., Հայոց Սմբատ Ա Բագրատունի թագավորը, ի թիվս այլ նվիրատվությունների, նաև Հարժիսն է գնում ու ապահարկ կարգավիճակով նվիրաբերում Տաթևի վանքին, որը տարիներ անց՝ 963 թ., իշխան Սահակի որդի Սմբատի կողմից վերահաստատվում է որպես վանքի սեփականություն: Հետագայում այն քանիցս օտարվել է Տաթևի վանքից, բայց ի վերջո, իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի 1274 թ. վիմագրով, վերահաստատվել է իբրև Տաթևի վանքի սեփականություն: Հին Հարժիսը *Քրտեր* անվանաձևով հիշատակվում է նաև Տաթևի վանքապատկան գյուղերի հուլավարի, ինչպես նաև կոռային աշխատանքի սահմանման նոր հարկացուցակներում:

Հին Հարժիսը կամ Ներքին շենը գտնվում է այժմյան Հարժիս գյուղից մոտ 1,5 կմ հարավ-արևելք՝ Որոտանի կիրճի բարձրադիր հարթության վրա, որտեղ պահպանվել են միջնադարյան գերեզմանոցը, Սբ Մինաս եռանավ բազիլիկ եկեղեցին (17-րդ դարի առաջին կես), իսկ մոտ 3 կմ արևելք՝ Որոտանի ձախ ափին, Քրդեր կամ Քյուրտլար կոչվող գյուղատեղում «Ալան թագավոր» անունով հայտնի սրբավայրն է, որի կառուցման հավանական ժամանակաշրջանը 10-11-րդ դարերն են: Սա թույլ է տալիս արձանագրել, որ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Հարժիսը (Հարժիքը) տեղագրորեն համապատասխանում է հենց այս տեղանքին:

Հարժիսի պատմության անքակտելի մասն են նաև Որոտան գետի վրա կառուցված միաթռիչք կամուրջը (14-րդ դար) և քարավանատունը (1343 թ.): Քարավանատան շինարարությունն իրականացվել է Օրբելյան իշխանական տան երևելի ներկայացուցիչների՝ Բուրթել Մեծի և Վախախի որդիներ Բեշքենի և Ինանիկի (Իվանե) հովանավորությամբ, որոնց գործունեության բուռն ժամանակաշրջանը 14-րդ դարի 30-40-ականներն են:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Տաթևի վանական համալիրի շրջակայքում պահպանվել են նաև փոքր գյուղատեղեր, որոնց անունները վկայված են Ստեփանոս Օրբելյանի պատմագրքում և կից հարկացուցակում: Ներկայում դրանք հիմնավեր են, որոնցից պահպանվել են միայն կանգուն և խոնարհված եկեղեցիներն ու կոթողները:

4.1. Աղանձ գյուղատեղն ու եկեղեցին. Տաթևի վանքապատկան Աղանձ (Աղանց, Աղաքյանդ) գյուղը գտնվել է Սյունյաց աշխարհի Ծղուկ գավառում՝ Տաթևի վանական համալիրից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, համանուն գետի ձախափնյա ոչ բարձր սարավանդին: Տաթևացիներին այս տեղանքն առավել հայտնի է Աղանձու գյունեի անունով, այսինքն՝ տարածվում է սարավանդի արևահայաց՝ գյունեի լանջին: Աղանձը քանիցս հիշատակված է 15-17-րդ դդ.

պարսկերեն կալվածագրերում և հրովարտակներում: Գյուղատեղի երեք զույգ որմնամույթերով միանավ, թաղակապ եկեղեցու վիմագրերը պարզում են, որ այն առնվազն 10-11-րդ դդ. կառույց է և վերստին նորոգվել է ոմն Էլպեկի կողմից՝ 1281 թ.:

Աղանձի եկեղեցու վիմագրերից ուշագրավ է 14-15-րդ դդ. թվագրվող խաչքարի արձանագրությունը, ըստ որի՝ ծնողները խաչքար են կանգնեցրել իրենց առևանգված զավակների փրկության առիթով, ինչը, ըստ էության, Սյունիքում Լենկ Թեմուրի և Շահռուխի արշավանքների հետևանքով տեղի ունեցած գերեվարության ուղղակի վկայությունն է:

4.2. Ցաքուտի եկեղեցին. Տաթև գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևելք՝ Որոտանի ձախ ափին, այսպես կոչված Սատանայի կամրջի մոտ է գտնվում Ցաքուտ անունով հայտնի տեղանքը, որի բարձրադիր մասում դեռ պահպանվել են փոքր, գմբեթավոր եկեղեցու և կից գերեզմանոցի ավերակները: Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ 10-րդ դարի առաջին կեսին՝ Վարարակնից դեպի Ցաքուտ ջուր բերելուց և Ցաքուտը Վարդուտ դարձնելուց հետո, Սյունյաց Հակոբ Դվինեցի եպիսկոպոսը նախաձեռնել է տեղում փոքր, գմբեթավոր եկեղեցու կառուցումը, որը նաև որմնանկարազարդվել է: Տեղում պահպանված վարպետանշանները և «Սարգէս» անվան հիշատակությունը վկայում են, որ եկեղեցու շինարար վարպետը, ըստ էության, Սարգես/Սարգիսն է եղել:

4.3. «Կոտրած խաչ» եկեղեցին. Տաթևի վանքից դեպի Մեծ անապատ ձգվող կես ճանապարհին՝ Ընկուզուտ կամ Հոնընկուզուտ կոչվող տեղանքից հարավ-արևելք, Աձի հողերի աջակողմում է գտնվում տեղացիների կողմից «Կոտրած խաչ» անունով հայտնի փոքր, խոնարհված եկեղեցին: Դատելով եկեղեցու ծավալային համաչափություններից և ճարտարապետական լուծումներից՝ այն միանավ, թաղակապ կառույց է եղել և կարելի է թվագրել առնվազն 10-րդ դարի առաջին կեսով: Եկեղեցու շրջակայքում ընկած են շուրջ մեկ տասնյակ արձանագիր խաչքարեր, պատվանդաններ, որոնք թվագրվում են 10-15-րդ դդ.:

4.4. Տամալեկի Սբ Աստվածածին եկեղեցին. Տաթևի վանքից մոտ 300-400 մ հարավ-արևելք, ձորի հանդիպակաց կողմում՝ Տաթև գետի աջ ափին, միջնադարյան Տամալեկ կամ Տամբալասք կոչվող գյուղի կենտրոնում է գտնվել Սբ Աստվածածին եկեղեցին, որից միայն հյուսիսային պատն է կանգուն:

Տամալեկցիները հակասություններ են ունեցել Տաթևի վանքի միաբանների հետ և մշտապես պայքարել են իրենց իրավունքների համար, իսկ Հակոբ Դվինեցի եպիսկոպոսի օրոք՝ 10-րդ դարի առաջին կեսին, երբ Տաթևի վանք ուխտի է եկել իշխանաց իշխան Սմբատի կողակից Սոփիա տիկինը, 1000 դահեկան է նվիրաբերել, որով գյուղը գնել և հեռացրել են բնակիչներին: Այդտեղ Հակոբ եպիսկոպոսը միանավ, թաղակապ հորինվածքով եկեղեցի է կառուցել ու բնակեցրել անապատականներով՝ ամրագրելով նզովքի բանաձևով:

4.5. Ցուրի եկեղեցին. Ստեփանոս Օրբելյանը քանիցս հիշատակում է ինչպես Ցուր գյուղն իր համանուն բերդով, վանքով, ագարակներով ու գետով, այնպես էլ բնակիչներին՝ ցուրաբերդցիներին: Տաթևի վանքի հին հարկացուցակում Ցուր գյուղը վկայված է Ծղուկ գավառում՝ 6 միավոր դահեկան հարկով: Տաթևի Սբ Առաքելոց եկեղեցու նավակատիքի հանդիսավոր արարողությունից հետո (906 թ.), Սյունյաց գահերեց իշխան Աշոտը վանքին նոր կալվածքներ է շնորհել, այդ թվում նաև՝ Ցուրն իր բերդով, ագարակներով, գետով ու վանքով: Պատմագիրը նկարագրում է նաև ցուրաբերդցիների՝ Տաթևի վանքի միաբանների դեմ անհնազանդությունը, վանքի կողոպուտը, ծեր միաբանների սպանությունը, որի հետևանքով արժանացել են վանականների նզովքին:

Ցուր-Ցուրաբերդը տեղորոշվում է այժմյան Տանձատափ գյուղի ստորոտին՝ ձորահայաց բարձունքի փոքր հարթության վրա, որի կենտրոնում գտնվելիս են եղել Սբ Գևորգ (չի պահպանվել), իսկ քարափի եզրին՝ Սբ Աստվածածին միանավ, թաղակապ եկեղեցիները: Սբ Աստվածածին եկեղեցու բեմառէջքի քիվի միատող արձանագրությունը հայտնում է նաև այն 9-10-րդ դդ. կառուցած Հայր Թադեոսի անունը, իսկ մոտ 50 մ հարավ-արևմուտք՝ «Սարիվանցի հող» կոչված վայրում, 1334 թ. եկեղեցու նորոգման առիթով խաչքար է կանգնեցվել:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Անապատական շարժումը, որպես այդպիսին, Հայաստան է ներթափանցել մոտավորապես 4-րդ դարասկզբից: Անապատականների բուն նպատակը ոչ միայն աստվածահաճո կյանքով ապրելն էր, այլև եկեղեցուց դուրս առանձնական կյանք վարելը: Դեռևս 9-րդ դարում Հայաստանի մի շարք շրջաններում հիմնվում են նաև վանք-անապատներ, ինչպես օրինակ՝ Սևանա կղզու անապատը, Մաքենյաց վանք-անապատը, Վանա լճի Լիմ, Կտուց կղզիներում հաստատված անապատները, Երևանի Սբ Անանիա առաքյալի անապատը և այլն: Հետաքրքիրն այն է, որ անապատային համալիրների կառուցումը, ճարտարապետական նոր լուծումներով, շարունակվեց նաև ուշ միջնադարում, ի մասնավորի՝ 17-րդ դարասկզբին, որի բնօրրանը դարձավ Սյունյաց աշխարհը:

5.1. Հալիձորի Հարանց կամ Սյունյաց Մեծ անապատը. Հալիձորից մոտ 5 կմ հարավ, Որոտանի աջափնյա բարձրադիր հարթության վրա է գտնվում 17-րդ դարի առաջին տասնամյակին հիմնադրված Հարանց անապատը, որը հայտնի է նաև Սյունյաց, Վերին Տաթևի կամ Տաթևի նախկին Մեծ անապատ անվանաձևերով: Անապատի կառուցումը նախաձեռնել են Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպս. Արենեցին, Կիրակոս քհն. Պոնտացին, Պողոս վրդ. Մոկացին և Արիստակես վրդ. Շամբեցին՝ մեկենասությամբ Քաշաթաղի մելիք Հայկազ Բ-ի, իսկ կառուցվելիք անապատի տեղի ընտրությունը վերապահված

էր մեր երկրորդ Լուսավորիչ Մովսես վրդ. Տաթևացուն (կաթողիկոս՝ 1629-1633 թթ.): Անապատը խարխլվել և ամայացել է 1658 թ. սողանքի հետևանքով, ապա վերաշինվել 18-րդ դարի առաջին կեսին՝ Տաթևի վանքի առաջնորդների հոգածությամբ: Հուշարձանախումբը բաղկացած է երկու զույգ մույթերով Սբ Ամենափրկիչ եռանավ բազիլիկ եկեղեցուց, հյուսիսից կից Սբ Հովհաննես մատուռ-մկրտարանից, գավիթ-սրահից, սեղանատնից, պարսպակից կառույցներից: Այն գրչության կենտրոն է եղել, որտեղից մեզ են հասել երկու տասնյակից ավելի ձեռագրեր, այսինքն՝ անապատականները նաև գրչական կյանքով են ապրել:

5.2. Տաթևի Մեծ անապատը. Տաթևի Մեծ անապատի համալիրը, որը գտնվում է Տաթև գյուղից մոտ 2 կմ հարավ-արևելք՝ Որոտան գետի աջ ափին, հիմնադրվել է Հարանց անապատի՝ 1658 թ. սողանքից հետո՝ 1660-ական թթ., տեղի առաջնորդ Արիստակես վրդ. Տաթևացու հոգածությամբ: Համակառույցը բաղկացած է երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ Սբ Աստվածածին եկեղեցուց, արևմտյան պատին կից գավիթ-սրահից, հյուսիսային մուտքին հարող փոքր գավիթ-դամբարանից, պարսպակից և ոչ պարսպակից շուրջ յոթ տասնյակ վանական խցերից (մի քանիսը՝ կրկնահարկ), սեղանատնից, խոհանոցից, տնտեսական և օժանդակ նշանակության այլ կառույցներից:

Պարզ է, որ մինչև 1660-ական թթ. գրչագրված և ծաղկված ձեռագրերը ներկայիս Մեծ անապատի հետ առնչություն ունենալ չէին կարող, իսկ 1680-ականներից մինչև 1720 թվակիր ձեռագրերից առնվազն մի քանիսը գրչագրվել են արդեն նոր անապատում:

5.3. Շինուհայրի Կուսանաց անապատը. Հին Շինուհայրի հարավային կողմում՝ Որոտանի ձորեզրին է կառուցվել Կուսանաց անապատի հուշարձանախումբը: Ի տարբերություն հարանց կամ արանց անապատների, որոնք կառուցվել են հնարավորինս ամայի ու անմարդաբնակ վայրերում, կուսանաց մենաստանները կառուցվել են հենց բնակավայրերի մոտ՝ դրանց կից: Շինուհայրի Կուսանաց անապատի հուշարձանախումբը բաղկացած է մեկ զույգ մույթերով եռանավ բազիլիկ Սբ Աստվածածին եկեղեցուց, հարավից կից փոքր գավթից, սեղանատնից և պարսպակից սենյակներից: Անապատի հիմնադրման ստույգ ժամանակը պարզում է եկեղեցու հարավային մուտքի բարավորի 1676 թվակիր արձանագրությունը, որի համաձայն՝ անապատը հիմնադրվել է նորոգումից 60 տարի առաջ, այսինքն՝ 1616 թ.:

Մեզ են հասել Շինուհայրում՝ 1620-1690-ական թթ. ընդօրինակված երկու տասնյակից ավելի ձեռագրեր: Հետաքրքրական են հատկապես այն ձեռագրերը, որոնց գրչության վայրը հիշատակելիս՝ գրիչները նշում են *անապատներ (անապատաց)* ընդհանրական ձևը, այսինքն՝ նկատի ունեն կիրճի՝ գրեթե միաժամանակ հիմնադրված հարանց և կուսանաց անապատները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանրացնելով ատենախոսության հիմնադրույթներից բխող վերլուծությունները՝ արձանագրենք հետևյալը.

ա. Սյունյաց մետրոպոլիտական աթոռն առանցքային նշանակություն է ունեցել Հայ ավանդական եկեղեցին արտաքին դավանաբանական ճնշումներից զերծ պահելու գործում: Այդ առումով բնավ պատահական չէր 15-րդ դարից ի վեր գրավոր սկզբնաղբյուրներում, ի մասնավորի՝ ձեռագրերի հիշատակարաններում և պատմագրության մեջ (Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի, Սիմեոն Երևանցի, Մաղաքիա արք. Օրմանյան և այլք) Տաթևի վանքը Սբ Եվստաթեոս առաքյալի անվան հետ աղերսելու ակնհայտ միտումը: Անշուշտ, երևույթի հիմքում Հայաստանում ունիթորական (միարարական) շարժման տարածումն ու կաթոլիկ եկեղեցու՝ պապականության գերիշխանության հաստատումը կանխելն էր, ինչով պայմանավորված՝ Սյունյաց կամ Արևելյան վարդապետները համառ պայքար են մղել կաթոլիկ և լատին կրոնավորների դեմ: Արդյունքում՝ Տաթևի վանքը ներկայացվել է իբրև առաքելադիր սրբավայր, միայն թե Սբ Եվստաթեոսի կամ Եվստաթե-Ստաթեի անվամբ, որի հիմքում, անշուշտ, Սբ Թադեոսն էր:

բ. Ավելի ուշ Սբ Եվստաթեոս առաքյալի անվան հետ է աղերսվել նաև Տաթևի վանքի հյուսիսային պարիսպներից դուրս գտնվող կիսավեր հուշակառույցը, որն իր ճարտարապետական հորինվածքով թեև աղերսվում է Աղիտուից հայտնի վաղմիջնադարյան հուշակառույցի հետ, սակայն քանդակային-հորինվածքային լուծումները և, առավել ևս հնագիտական համատեքստը ողջ հուշարձանախմբի հետ, մեզ թույլ են տալիս այն թվագրել առնվազն 9-10-րդ դդ.՝ հավանական համարելով Սուրբ Խաչի պաշտամունքի համար ի սկզբանե կառուցված լինելը:

գ. Ստեփանոս Օրբելյանը թեև վկայում է Տաթևի վանքի տեղում դեռևս վաղմիջնադարյան փոքր եկեղեցու գոյությունը, այդուհանդերձ, ինչպես գրավոր աղբյուրներն ու նյութական մշակույթի իրեղեն նմուշներն են ապացուցում, Տաթևի վանքում վաղմիջնադարյան մշակութային ժառանգություն, որպես այդպիսին, փաստագրելի չէ: Հավանական պատճառը վաղ միջնադարում Սյունյաց մետրոպոլիտական աթոռի՝ Շաղատ գյուղաքաղաքում հաստատված լինելն էր, որը Տաթև է տեղափոխվել միայն 9-րդ դարասկզբին՝ Դավիթ եպիսկոպոսի օրոք:

դ. Տաթևի վանքի գլխավոր եկեղեցու կառուցման առիթով է կանգնեցվել գավազանակերպ ճոճվող սյունը (895-904 թթ.), որը վաղ միջնադարում լայն տարածում գտած խաչակիր հուշասյուների կանգնեցման ավանդույթը զարգացած միջնադարում վերականգնելու ակնհայտ փորձերից է, իսկ ճոճվելու առավելությունը, ըստ էության, նպատակ է ունեցել ապահովելու կոթողը հաճախադեպ երկրաշարժերից:

ե. Վիմագրական նոր վկայությունները թույլ են տալիս արձանագրել, որ վանքի Սբ Առաքելոց տաճարի եթե ոչ ճարտարապետը, ապա առնվազն քան-

դակագործը Եղիա/Եղիշե վարդապետն է, որի դիմաքանդակը կրող արձանագիր տրոմպի քարը ներկայում ցուցադրվում է վանքի պարսպակից թանգարանում:

զ. Վանքի պարսպակից թանգարանում է ցուցադրվում նաև համաքրիստոնեական Սբ Պանդալեոնի անվանակիր կոթողը, որն իր հերթին վավերացնում է Սյունիքում բժիշկ Պանդալեոնի պաշտամունքը: Հայ իրականության մեջ այս սրբի պաշտամունքն առավել ընդգծված է Արցախում, ուստի 9-10-րդ դդ. թվագրվող Տաթևի նորահայտ արձանագրությունն ուղղակիորեն ընդլայնում է այդ պաշտամունքի աշխարհագրությունը՝ ներառելով նաև Սյունիքը:

է. Հուշարձանախմբի միջգիտակարգային համալիր ուսումնասիրությունը պարզում է նաև վանքի շինարարական առնվազն յոթ փուլերը, որոնք հիմնականում պայմանավորված են Սյունիքում պարբերաբար տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերով: Փաստելի է, որ Տաթևի վանքի Կաթողիկե եկեղեցու գմբեթը վերակառուցվել է 18-րդ դարի առաջին քառորդում, իսկ ժամանակաշրջանը պարզելն առիթ դարձավ նաև հստակեցնելու թմբուկի արտաքին քանդակային-հորինվածքային լուծումներն ու հնարավոր զուգահեռները:

ը. Ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ Տաթևի վանքի հին գավիթը, որը նաև դամբարան ու աղոթատեղ է ծառայել, Սյունյաց վաղագույն գավիթներից է, եթե ոչ վաղագույնը՝ կառուցված 10-րդ դարասկզբին:

թ. Զարգացած միջնադարի վաղ շրջափուլին են բնորոշ նաև Սյունյաց կամարակապ գավիթ-սրահները, որոնք թեև ազդված են վաղմիջնադարյան տաճարային համալիրներից (Երերույք, Տեկոր, Դվին, Օձուն, Բոլնիսի Սիոն, Քվեմո Բոլնիսի, Դեյր Սոլահիբ և այլն), սակայն վանքերում դրանք ի հայտ են գալիս 11-րդ դարի առաջին կեսին (Տաթև, Վահանավանք, Որոտնավանք, Հին Հարժիսի «Ալան թագավոր», Ցաղաց քար և այլն):

ժ. Տաթևի վանքի խորհրդանիշներից մեկն էլ հայ միջնադարյան ճարտարապետության եզակի դրսևորումներից համարվող Սբ Աստվածածին վերդարպասյա եկեղեցին է՝ կառուցված 1087 թ.: Վանքերի սրբազան մուտքերը եկեղեցիներով նշանավորելու ավանդույթի հիմքում, անշուշտ, Երկնային Երուսաղեմի գաղափարն է, որը միաժամանակ պարսպակից դարպասը պաշտպանելու գործառույթ է ունեցել (Վահանավանք, Ցաղաց քար, Կարբի և այլն): Այն աղերսվում է փոքր տաճարներով պսակված հունահռոմեական դամբարանների հետ, երբ ընդգծվում էր նաև վերնահարկում գտնվող եկեղեցու կապը դամբարանի հետ, որի ենթատեքստում Քրիստոսի Համբարձման գաղափարն էր, մի երևույթ, որը փաստելի է նաև Տաթևում, քանի որ դարպասին կից է նաև թաղակապ տապանատուն-եկեղեցին:

ժա. Տաթևի վանքի արձանագիր պղնձե զույգ զանգերի գոյությունը թույլ է տալիս ենթադրել, որ Տաթևում է կառուցվել նաև հայ միջնադարյան վաղագույն զանգակատներից մեկը, որի կառուցման նախաձեռնողն է եղել ոչ թե Հովհան Որոտնեցին, ինչպես ենթադրվել է, այլ՝ Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը:

ժբ. Տաթևի վանքի վաղխաչքարային մշակույթը դրսևորվում է յուրովի՝ խաչը պատկերելով բուսականացված, կենացծառային, դրախտային այգու կենտ-

րոնում՝ իբրև խորհրդանիշ ընտրելով խաչախորքը հարդարող խաղողի որթագալարն ու փարթամ արմավազարդը:

ժգ. Տաթևի վանքը, շնորհիվ մեզ ավանդած ձեռագրական հարուստ ժառանգության (շուրջ 400 միավոր), ուսումնագիտական և գրչության կենտրոն է եղել: Ժամանակագրական առումով Տաթևում ընդօրինակված կամ վանքին վերագրելի 131 ձեռագրերը 13-րդ դարից վաղ չեն և դա ինքնին հասկանալի է, քանի որ վանքի սրբությունների հետ միասին ձեռագրերը ևս ոչնչացվել են Բաղաբերդի 1170 թ. գրավման հետևանքով, որտեղ ի պահ էր տրվել ավելի քան տասը հազար ձեռագիր մատյան: Այդ բացը լրացվել է Տաթևի համալսարանի ծաղկման շրջանում՝ 14-15-րդ դդ., ապա նաև՝ 17-րդ դարի առաջին կեսին, երբ գրչության կենտրոններ են դարձել նաև Տաթևի հին ու նոր անապատները:

ժդ. Տաթևի գրչության դպրոցը մեզ է ավանդել աստվածաբանական, քարոզխոսական, մեկնողական գրականություն, որն առավել ընդգծված է համալսարանի գործունեության շրջանում՝ գրչագրված տեղի երևելի այրերի՝ Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու, Մատթեոս Ջուղայեցու և մյուսների կողմից: Ձեռագրերի բովանդակային առանձնահատկություններով պայմանավորված՝ յուրահատուկ է նաև դրանց մանրանկարչական հարդարանքը, որն առավել զուսպ ու պարզունակ է:

ժե. Ինքնատիպ է Տաթևից հայտնի ձեռագրերի՝ 16-17-րդ դդ. տասնյակ հիշատակարաններում հանդիպող 9800 սրբոց մասունքների՝ մեկտեղ հավաքված լինելու մասին վկայությունը, որը, մեր համոզմամբ, հիշատակարանային կաղապարի վառ օրինակ է:

ժզ. Գրչության կենտրոն դարձած Տաթևի վանքն ի սկզբանե նաև ձեռագրապահպան կենտրոն է եղել, որտեղ դեռևս 10-րդ դարասկզբին կառուցված գրատան մասին է վկայում Ստեփանոս Օրբելյանը: Այդ գրատան երբեմնի գոյությամբ պիտի պայմանավորել նաև այն 157 ձեռագրերը, որոնցից 155-ը նախորդ դարասկզբին փոխադրվել են նախ Սբ Էջմիածին, ապա՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարան, իսկ մյուսը երկուսը Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի և Սբ Էջմիածնի մատենադարաններում են:

ժէ. Տաթևի համալսարանը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Գլաձորի ավանդույթների կրողը 14-15-րդ դդ.: Թեև Գլաձորի փակվելուց հետո (1338 թ.) համալսարանը տարբեր բաբունապետների օրոք տեղից տեղ է փոխադրվել՝ Գլաձորից Հերմոն, այնուհետ՝ Որոտնավանք, Ապրակունյաց վանք, այնտեղից էլ՝ Տաթև (մինչև 1435 թ.), այդուհանդերձ ընդունված է ասել, որ հենց Տաթևում է համալսարանը վերագտել իր երբեմնի փառքը՝ ի դեմս մեծ ուսուցչապետ, աստվածաբան ու փիլիսոփա Գրիգոր Տաթևացու:

ժը. 9-րդ դարից ի վեր Տաթևի վանքը հռչակվել է նաև որպես հոգևոր ավատատիրության կենտրոն, որն առնվազն 10-րդ դարում ուներ վանքապատկան և հարկատու շուրջ 700 գյուղ ու ագարակ, որոնց անունները վկայված են Ստեփանոս Օրբելյանի պատմագրքին կից հարկացուցակում: 17-18-րդ դդ. նոր հարկացուցակներում գյուղերի թիվն էապես նվազել է՝ հասնելով 264-ի:

ժթ. 9-10-րդ դդ. ի վեր Տաթևի վանքը խոշոր կալվածքներ ուներ ոչ միայն Սյունյաց հեռավոր գավառներում, այլև՝ իր շրջակայքում, որոնց բնակիչները հարկադիր աշխատանքի պարտավորություն ունեին, ինչն էլ հանգեցրել էր գյուղացիական ապստամբությունների, քանի որ ոտնահարվում էր նրանց հողատիրական իրավունքը: Այս առումով ուշագրավ է վանքամերձ փոքր եկեղեցիների թվագրումը 10-րդ դարով (Ցաքուտ, Տամալեկ, Ցուր, Աղանձ, «Կոտրած խաչ»), ինչը վկայում է, որ վանքի վերազարթոնքին զուգահեռ փոքր եկեղեցիներ են կառուցվել նաև շրջակայքում:

ի. 17-րդ դարասկզբին Հալիձորում կառուցված Սյունյաց կամ Հարանց Մեծ անապատը, որին գրեթե ժամանակամերձ է նաև Շինուհայրի Կուսանաց անապատը, ուշ միջնադարում անապատականության նոր վերելքի վառ դրսևորումներն են: 1658 թ. սողանքից հետո թեև Հարանց անապատը խարխլվել ու նոր անապատ է հիմնվել Տաթևի ստորոտում, սակայն 18-րդ դարի սկզբներին այն դարձյալ վերաշինվել ու գործել է: Տաթևի հին ու նոր Հարանց և Շինուհայրի Կուսանաց անապատները ևս դարձել են գրչության ու ձեռագրապահպան կենտրոններ, որտեղից մեզ է հասել շուրջ հինգ տասնյակ ձեռագիր՝ 17-18-րդ դդ. բնորոշ գրչական ու մանրանկարչական առանձնահատկություններով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Յարութիւնեան Ա.**, Տաթեւի վանքի վիմագրերի նախընթաց հրատարակութիւնները եւ ներկայ անելիքները», «Հանդէս ամսօրեայ», 2016, Հ՚ 1-12, սիւն 129-146:
2. **Յարութիւնեան Ա.**, Սբ Պանդալեոնի (Պանտաղիոն) անուան յիշատակմամբ նորայայտ վիմագիր Տաթեւի վանքից, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. ԼԷ, Բէյրութ, 2017, էջ 555-571:
3. **Հարությունյան Ա.**, Տաթև գյուղի Սբ Մինաս եկեղեցին և նրա վիմագրերը, «Էջմիածին», 2017, ԺԱ, էջ 122-136 + 3 էջ ներդիր:
4. **Հարությունյան Ա.**, Հալիձորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատը՝ գրչության կենտրոն, [Մատենադարանի] երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2018, էջ 316-342:
5. **Հարությունյան Ա.**, Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը, «Բանբեր հայագիտության», 2018, Հ՚ 1, էջ 137-149:
6. **Հարությունյան Ա.**, Պետրոսախաչի նորահայտ արձանագրությունը, «Էջմիածին», 2018, Թ, էջ 80-87 + 2 էջ ներդիր:
7. **Յարութիւնեան Ա.**, Վիմագրական նոր վկայութիւն Մէլիք Հայկազ Բ-ի գործունէութիւնից, «Սիոն», 2021, Հ՚ 1-3, էջ 119-132:
8. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի Սբ Պողոս-Պետրոս տաճարի պատկերաքանդակները և դրանց հավանական վարպետը, «Պատմաբանասիրական հանդես», 2021, Հ՚ 1, էջ 145-158:

9. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքապատկան Աղանձ գյուղը և նորահայտ եկեղեցու վիմագրերը», «Բանբեր Մատենադարանի», հ. 31, 2021, էջ 151-170 + 1 էջ ներդիր:
10. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի նորահայտ ծածկագիրը և նմանօրինակ մյուս վիմագրերը, «ՎԷմ» համահայկական հանդես, 2021, Հմր 3, էջ 147-162:
11. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի շինարարական փուլերը (ըստ երկրաշարժերի տարեգրության), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2022, Հմր 2, էջ 250-267:
12. **Հարությունյան Ա.**, Տաթևի Մեծ անապատի վիմագրական ժառանգությունը, «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ», հ. 5, Երևան, 2023, էջ 76-93 + 258-265:
13. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի պարսպակից մուտքերի և աղբյուրի կառուցման ժամանակը, «Պատմաբանասիրական հանդես», 2023, Հմր 3, էջ 230-245:
14. **Յարութիւնեան Ա.**, Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութեան» յաւելուածն իբրեւ Տաթեւի վանքի Քօթուկ, «Սիոն», 2023, Հմր 8-12, էջ 368-393:
15. **Հարությունյան Ա.**, Ջրանցքաշինությունը միջնադարյան Հայաստանում ըստ հայ վիմագիր աղբյուրների, «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում. հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը» (խմբ.՝ Ա. Բոբոխյան, Ռ. Հովսեփյան), Երևան, 2024, էջ 240-251:
16. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի Սբ Առաքելոց եկեղեցու գմբեթի քանդակային հարդարանքը և թվագրումը, «Բանբեր Մատենադարանի», հ. 39, 2025, էջ 65-80 + 4 էջ ներդիր:
17. **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքը՝ Սբ Եվստաթեոս առաքյալի ուխտ, «ՎԷմ» համահայկական հանդես, 2025, Հմր 1, էջ 182-208:
18. Melkonyan H., **Harutyunyan A.**, Davtyan D., Excavations at Tatev Monastery in 2014-2015, “Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies”, 2017, vol. XI, issue 1-2, pp. 305-320.
19. **Harutyunyan A.**, The Inscriptions of the Church Utensils of Tatev Monastery (Republic of Armenia, Region of Syunik)”, “Revista Arheologică”, 2020, vol. XVII, nr. 2, pp. 67-77 (Scopus).
20. **Harutyunyan A.**, The Research of Epigraphs of Tatev Monastery and Surrounding Monuments, “Archaeology of Armenia in Regional Context”, Proceedings of the International Conference dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on July 9-11, 2019 in Yerevan (edited by P. Avetisyan and A. Bobokhyan), Yerevan, 2021, pp. 414-426.
21. **Harutyunyan A.**, The Mirror-Writing Epigraphic Cryptography of Tatev Monastery and Similar Parallels, “Cercetări Arheologice”, 2023, 30.1, pp. 333-344 (Scopus).
22. **Harutyunyan A.**, The Monastery of Tatev and the Homonymous Hermitages, World Heritage Sites in Armenia (editor: Kh. Harutyunyan), Yerevan, 2024, pp. 100-117.
23. **Harutyunyan A.**, The “King Alan” Sanctuary of Old Harzhis and Epigraphic Heritage (Syunik, Republic of Armenia), “Cercetări Arheologice”, 2024, 31.2, pp. 475-490 (Scopus).
24. **Harutyunyan A.**, The Spiritual Citadel of Syunik: Tatev, An Illustrated Investigation (editor: K. Matevosyan), Yerevan, Matenadaran, 2024, 288 p.

АРУТЮНЯН АРСЕН ЭДУАРДОВИЧ

СРЕДНЕВЕКОВЫЙ ТАТЕВ И ЕГО ПИСЬМЕННО-КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук
по специальности 07.00.03 «Археология»
Защита состоится 30 октября 2025 г. в 14:00 ч., на заседании специализированного совета 007 по археологии и этнографии КВОН, действущего при Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

Резюме

В результате проведенного исследования были сформулированы следующие выводы:

1. *Сюникская* митрополия имела ключевое значение в деле ограждения Армянской Апостольской Церкви от внешнего догматического давления. В этом отношении отнюдь не случайна отчетливая тенденция, начиная с XV века, в письменных источниках, в частности в колофонах рукописей и в историографической традиции (*Григор Даранагци, Аракел Даврижеци, Симеон Ереванци, Магакья арх. Орманян* и др.), связывать монастырь *Татев* с именем святого апостола *Евстафия.* Несомненно, в основе этого явления лежало распространение в Армении униатского движения и необходимость воспрепятствовать утверждению верховенства католической церкви и папства, вследствие чего сюникские или восточные вардапеты вели упорную борьбу против католических и латинских духовных лиц. В результате *Татевский* монастырь обрел статус апостольской церкви под именем *св. Евстафия*, или *Евстафия-Стате*, в основе которого, несомненно, лежала фигура святого Фаддея.

2. Позднее с именем святого апостола *Евстафия* было связано также находящееся за пределами северных стен *Татевского* монастыря полуразрушенное мемориальное сооружение, которое по своей архитектурной композиции хотя и перекликается с известным раннесредневековым памятником *Агиту*, однако скульптурно-композиционные решения, и тем более археологический контекст всего ансамбля позволяют датировать его по крайней мере IX–X вв., полагая, что оно первоначально было возведено для почитания Святого Креста.

3. Хотя *Степанос Орбелян* свидетельствует о том, что на месте *Татевского* монастыря еще в раннесредневековый период существовала маленькая церковь, тем не менее, как письменные источники, так и вещественные памятники материальной культуры доказывают, что в *Татеве* раннесредневековое культурное наследие как таковое не зафиксировано. Наиболее вероятной причиной этого было пребывание в раннем Средневековье *Сюникского* митрополичьего престола в городище *Шагат*, перенесенного в *Татев* лишь в начале IX в. при епископе Давиде.

4. По случаю строительства главной церкви *Татевского* монастыря был воздвигнут жезлообразный качающийся столп (895–904 гг.), представляющий собой одну из очевидных попыток в зрелом Средневековье возродить традицию установления крестовых памятных колонн, широко распространённую в раннесредневековый период. Функция колебания столпа, по существу, была предназначена для обеспечения его устойчивости при частых землетрясениях.

5. Новые эпиграфические свидетельства позволяют зафиксировать, что если не архитектором, то по крайней мере скульптором храма Св. Апостолов монастыря был

мастер *Егиа/Егише,* чьё барельефное изображение сохранилось на камне-тромпе с надписью, ныне экспонируемом в монастырском музее.

6. В монастырском музее экспонируется также посвящённый вселенскому святому Пантелеимону (Панталеон) памятный столп, который, в свою очередь, удостоверяет существование культа врача Пантелеона в *Сюнике.* В армянской действительности почитание этого святого особенно ярко выражено в *Арцахе*, и потому новая эпиграфическая находка IX–X вв. в *Татеве* непосредственно расширяет географию этого почитания, включая в неё и *Сюник.*

7. Комплексные междисциплинарные исследования архитектурного ансамбля показывают, что было как минимум семь этапов строительных и восстановительных работ в монастыре, что было в основном обусловлено последствиями периодических разрушительных землетрясений, происходивших в *Сюнике.* Достоверно установлено, что купол Кафедральной церкви *Татевского* монастыря был перестроен в первой четверти XVIII в., а прояснение датировки явилось поводом для уточнениея внешних скульптурно-композиционных решений барабана и возможный параллелей.

8. Исследование позволяет констатировать, что старый притвор *Татевского* монастыря, служивший одновременно усыпальницей и молельней, относится к числу древнейших притворов *Сюника*, если не является самым ранним, построенным в начале X в.

9. Для раннего этапа развитого Средневековья характерны также *сюникские* сводчатые притворы, которые, хотя и испытали влияние раннесредневековых храмовых комплексов (*Ереруйк, Текор, Двин, Одзун, Болнисский Сион, Квемо Болниси, Дейр-Солаиби* и др.), однако в составе монастырских комплексов появляются лишь в первой половине XI в. (*Татев, Ваганаванк, Воротнаванк,* Старий *Аржисе* «царь Алан» в, *Цахац кар* и др.).

10. Одним из символов *Татевского* монастыря стала надвратная церковь Святой Богородицы, построенная в 1087 году и являющаяся уникальным архитектурным проявлением армянского средневекового зодчества. В основе традиции отмечать священные входы монастырей посредством церквей несомненно лежит идея Небесного Иерусалима, одновременно выполнявшая функцию защиты примыкающих ворот (*Ваганаванк, Цахац кар, Карби* и др.). Эта традиция восходит к греко-римским усыпальницам, увенчанным малыми храмами, где подчёркивалась связь верхнеуровневой церкви с гробницей, в контексте которой выражалась идея Вознесения Христова. Данный феномен зафиксирован и в *Татеве,* поскольку к воротам примыкала также сводчатая усыпальница-церковь.

11. В *Татевском* монастыре есть пара медных колоколов с надписями. Это позволяет предположить, что здесь находится одна из самых древних колоколен Армении, причём инициатором его строительства был не *Ован Воротнеци*, как считалось ранее, а *сюникский* митрополит *Степанос Орбелян.*

12. Ранняя хачкарная культура *Татевского* монастыря проявляется своеобразно: крест изображается в растительной, древа-жизни и райско-садовой символике, в качестве центральных мотивов избираются виноградная лоза и пышная пальмовая ветвь, украшающие крестовое распятие.

13. Благодаря дошедшему до нас богатому рукописному наследию (около 400 единиц), *Татевский* монастырь был известным центром науки и письменности. В хронологическом отношении 131 рукопись, переписанная в *Татеве* или приписываемая монастырю, датируется не ранее XIII в., что вполне объяснимо, так как вместе со святынями монастыря рукописи были уничтожены в результате захвата *Багаберда* в 1170 г., куда было передано на хранение свыше 10.000 манускриптов. Этот пробел

частично восполняется в период расцвета *Татевского* университета в XIV–XV вв., а затем и в первой половине XVII в., когда скрипторий становятся также старые и новые пустыни *Татева*.

14. *Татевская* скриптория передала нам богословскую, проповедническую и экзегетическую литературу, что особенно ярко проявляется в период деятельности университета — в рукописных трудах таких выдающихся деятелей, как *Григор Татеваци, Аракел Сюнеци, Маттеос Джугаеци* и др. В зависимости от содержательных особенностей рукописей своеобразным является и их миниатюрное оформление, отличающееся большей сдержанностью и простотой.

15. Оригинален засвидетельствованный в десятках колофонов XVI–XVII вв. из *Татева* мотив о сосредоточении в монастыре 9800 святых мощей, что, на наш взгляд, является ярким примером использования формульного колофонного шаблона.

16. Монастырь *Татев*, служивший скрипторием, изначально был центром хранения рукописей, о книгохранилище которого, построенном в начале X века, свидетельствует историк Степанос Орбелян. Существование этого скриптория в прошлом обусловливает наличие 157 рукописей, из которых 155 в начале прошлого века были перемещены сначала в Святой Эчмиадзин, а затем в Матенадаран имени Месропа Маштоца в Ереване, тогда как две другие находятся в книгохранилищах монастыря Святого Всеспасителя в Новой Джульфе и Святого Эчмиадзина.

17. Университет *Татева* был ничем иным, как носителем традиций *Гладзора* в XIV–XV веках. Хотя после закрытия *Гладзора* (1338 г.) университет под властью различных «магистров» перемещался с места на место — из *Гладзора* в *Гермон*, затем в *Воротнаванк,* монастырь *Апракунис,* а оттуда и в *Татев* (до 1435 г.), — тем не менее принято считать, что именно в *Татеве* университет обрел свою былую славу в лице, как в армянской традиции его принято величать триждевеликого учителя, богослова и философа *Григора Татеваци.*

18. С IX века монастырь *Татев* прославился также как центр церковного феодализма, который как минимум в X веке владел монастырскими и податными примерно 700 деревнями и поместьями, названия которых засвидетельствованы в налоговом списке, прилагаемом к историческому сочинению *Степаноса Орбеляна.* В новых налоговых списках XVII–XVIII веков число деревень существенно уменьшилось, достигнув 264.

19. С IX–X веков монастырь *Татев* владел крупными поместьями не только в отдаленных провинциях *Сюника*, но и в своей округе, жители которых имели обязательства по принудительному труду, что привело к крестьянским восстаниям, поскольку нарушались их права на землю. В этом отношении примечательна датировка малых церквей вблизи монастыря X веком (*Цакут, Тамалек, Цур, Агандз, «Котрац хач»),* что свидетельствует о том, что параллельно с возрождением монастыря малые церкви строились и в округе.

20. Построенный в начале XVII века в *Алидзоре Сюникский* или *Аранц Мец анапат* [Большая мужская пустынь], которому почти современен также *Кусанац анапат* [Девичья пустынь] в *Шинуайре* (речь об отшельнических пустынях), являются яркими проявлениями нового подъема анахоретства в позднем средневековье. Хотя после оползня 1658 г. *Аранц анапат* пришел в упадок и новая отшельническая пустынь была основана у подножия *Татева,* однако в начале XVIII века пустынь *Аранц* вновь была восстановлена, и в ней возобновилась духовная жизнь. Старая и новая пустыни *Аранц* в *Татеве* и пустынь *Кусанац* в *Шинуайре* также стали скриптории, откуда до нас дошло около пяти десятков рукописей с характерными особенностями скрипториев и миниатюрной живописи XVII–XVIII веков.

HARUTYUNYAN ARSEN EDUARD

MEDIEVAL TATEV AND ITS WRITTEN-CULTURAL HERITAGE

Dissertation for the degree of Doctor of History
on the specialization "Archaeology" 07.00.03
The defense of the dissertation will be held on October 30, 2025, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of the HESC by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents st.)

Summary

The following conclusions were drawn from the study:

1. The Syunik metropolitan see has played a pivotal role in preserving the Armenian Apostolic Church from external doctrinal pressures. In this regard, it is by no means coincidental that, from the 15th century onward, written primary sources—particularly the colophons of manuscripts and historiographical works *(Grigor Daranaghtsi, Arakel Davrizhetsi, Simeon Yerevantsi, Maghak'ia Archbishop Ormanyan,* and others)—exhibit a clear tendency to associate Tatev Monastery with the name of *St. Eustace (Eustathius)* the Apostle. Undoubtedly, underlying this phenomenon was the spread of the Uniate movement in Armenia and the need to counter the Catholic Church's assertion of papal supremacy, compelling the *Syunik* or Eastern *vardapets (Archimandrite)* to wage a persistent struggle against Catholic and Latin clergy. As a result, Tatev Monastery came to be regarded as an apostolic holy site, albeit under the name of *St. Eustace* or *Eustat'e-Stat'e,* whose cult was undoubtedly based on the figure of St. Thaddeus.

2. The semi-ruined monument located outside the northern walls of *Tatev* Monastery has also been associated with the name of *St. Eustace* the Apostle in later periods. While its architectural composition bears similarities to the early medieval monument known from *Aghitu*, the sculptural-compositional solutions and, most notably, the archaeological context of the entire ensemble allow us to date it to at least the 9th–10th centuries, with the likelihood that it was originally constructed for the veneration of the Holy Cross.

3. Although *Stepanos Orbelyan* attests to the existence of a small church at the site of *Tatev* Monastery in the early medieval period, both written sources and material cultural artifacts improved version demonstrate that an early medieval cultural heritage, as such, is not recorded at *Tatev* Monastery. The probable reason for this is that the *Syunik* metropolitan see was established in the fortified settlement of *Shaghat* during the early medieval period and was relocated to *Tatev* only at the beginning of the 9th century, during the tenure of Bishop David.

4. On the occasion of the construction of the Cathedral of *Tatev* Monastery, a swaying column in the form of a staff (erected between 895–904 CE) was installed, representing one of the clear attempts to revive the tradition of erecting cross-bearing commemorative pillars, widely practiced in the early medieval period, during the

developed medieval era. The swaying feature, in essence, was designed to ensure its stability against frequent earthquakes.

5. New epigraphic evidence indicates that Vardpet (master) *Eghia/Eghishe* was, if not the architect, at least the sculptor of the Holy Apostles Cathedral. His bas-relief image and inscription, preserved on a squinch-stone, are now exhibited in the monastery's museum.

6. Also displayed in the monastery's museum adjacent to the monastery's fortress walls is a memorial pillar dedicated to St. Panteleimon (Pantaleon), an ecumenical saint, which confirms the cult of the physician-saint Pantaleon in *Syunik.* In the Armenian context, this saint's veneration is particularly prominent in *Artsakh*. Thus, the newly discovered inscription at *Tatev,* dated to the 9th–10th centuries, directly expands the geographical scope of this cult, encompassing *Syunik* as well.

7. The interdisciplinary comprehensive study of the architectural ensemble also reveals at least seven construction and restoration phases of *Tatev* Monastery, primarily driven by the recurrent devastating earthquakes in *Syunik*. It is reliably established that the dome of the monastery's Cathedral was reconstructed in the first quarter of the 18th century, and this period was clarified based on the sculptural-compositional solutions of the drum's exterior and their possible parallels.

8. The study allows us to establish that the old narthex of *Tatev* Monastery, which simultaneously served as a mausoleum and a place of prayer, is among the earliest narthex in *Syunik,* if not the earliest, constructed at the beginning of the 10th century.

9. The early phase of the developed medieval period is also characterized by *Syunik's* arched narthex-halls, which, while influenced by early medieval temple complexes (such as: *Yereruyk, Tekor, Dvin, Odzun, Bolnisi Sion*, *Kvemo Bolnisi, Deir Solaib,* and others), appear in monastic complexes in the first half of the 11th century (*Tatev, Vahanavank, Vorotnavank, "Alan t'agavor"* (King Alan) sanctuary in Old *Harzhis*, *Tsaghats Kar*, and others).

10. One of the symbols of *Tatev* Monastery is the *St. Astvatsatsin* (Holy Mother of God) gate-church, constructed in 1087 CE, considered a unique manifestation of Armenian medieval architecture. The tradition of marking sacred monastery entrances with churches is undoubtedly rooted in the concept of the Heavenly Jerusalem, while also serving the function of protecting the fortified gate (as seen in *Vahanavank, Tsaghats Kar, Karbi,* and others). This tradition traces its origins to Greco-Roman mausoleums crowned with small temples, where the connection between the church on the upper level and the mausoleum below was emphasized, with the subtext of Christ's Ascension. This phenomenon is also evident at Tatev, as adjacent to the gate is a vaulted mausoleum-church.

11. The existence of inscribed copper paired bells at *Tatev* Monastery suggests that one of the earliest Armenian medieval belfries is located there. The initiator of its construction was not *Hovhan Vorotnetsi*, as previously assumed, but rather *Syunik* Metropolitan *Stepanos Orbelyan*.

12. The early *khachkar* (cross-stone) culture of *Tatev* Monastery manifests uniquely, depicting the cross within a vegetal, tree-of-life, or paradisiacal garden motif, with the grapevine and lush palm ornamentation serving as symbolic elements adorning the cross's motif.

13. Due to its rich manuscript heritage of roughly 400 items, *Tatev* Monastery was a famous center of scholarship and a scriptorium. Chronologically, the 131 manuscripts copied at *Tatev* or attributed to the monastery are not earlier than the 13th century, which is understandable given that, along with the monastery's sacred relics, its manuscripts were also destroyed during the 1170 CE conquest of *Baghaberd,* where over 10.000 manuscripts had been stored. This gap is partially filled during the flourishing period of *Tatev* University in the 14th–15th centuries and also in the first half of the 17th century, when the old and new monastic hermitages of *Tatev* also became centers of calligraphy.

14. *Tatev's* scriptorium has bequeathed to us theological, homiletic, and exegetical literature, which is particularly prominent during the active period of the university, found in the manuscript works of notable figures such as: *Grigor Tatevatsi, Arakel Syunetsi, Matt'eos Jughayetsi,* and others. Due to the thematic specificity of the manuscripts, their miniature decorations are distinctive, characterized by a more restrained and simplistic style.

15. Particularly distinctive is the motif attested in dozens of colophons from the 16th–17th centuries, originating from *Tatev,* which mention the concentration of 9.800 holy relics in the monastery. In our view, this represents a vivid example of a formulaic colophonic template.

16. The *Tatev* Monastery, which served as a scriptorium, was initially a center for manuscript preservation, whose book depository, built in the early 10th century, is attested by the historian *Stepanos Orbelian*. The existence of this scriptorium in the past explains the presence of 157 manuscripts. Of these, 155 were transferred at the beginning of the last century, first to Holy *Echmiadzin* and then to the Mesrop Mashtots Matenadaran in Yerevan. The remaining two manuscripts are housed in the book depositories of the Holy Savior Monastery in New *Julfa* and Holy *Echmiadzin.*

17. *Tatev* University was none other than the bearer of *Gladzor's* traditions in the 14th–15th centuries. Although, after the closure of *Gladzor* (1338 CE), the university was relocated under the authority of various "magisters" (rectors) moving from *Gladzor* to *Hermon,* then to *Vorotnavank*, *Aprakunis* Monastery, and finally to *Tatev* (until 1435 CE), it is generally acknowledged that it was at *Tatev* that the university regained its former glory, largely through the efforts of the thrice-great teacher, theologian, and philosopher *Grigor Tatevatsi*, as he is known in the Armenian tradition.

18. Since the 9th century, *Tatev* Monastery has been renowned as a center of church feudal authority. By at least the 10th century, it possessed approximately 700 monastery-owned and taxable villages and estates, the names of which are recorded in the tax register appended to *Stepanos Orbelyan's* historical work. The number of villages significantly decreased to 264 in the new tax registers of the 17th–18th centuries.

19. Since the 9th–10th centuries, *Tatev* Monastery held extensive estates not only in the distant regions of *Syunik* but also in its immediate vicinity, where residents were obligated to perform forced labor. This led to peasant uprisings, as their land rights were infringed upon. In this regard, the dating of small churches near the monastery to the 10th century (*Tsak'ut, Tamalek, Tsur*, *Aghandz*, *"Kotrats khach'")* is noteworthy, indicating that, alongside the monastery's revitalization, smaller churches were also constructed in the surrounding area.

20. The *Syunik* or *Harants* Great Hermitage *(hermitage for men),* constructed in *Halidzor* at the beginning of the 17th century, along with the nearly contemporaneous *Kusanats* Hermitage *(hermitage for virgins)* in *Shinuhayr,* represent vivid manifestations of a new resurgence in anchoritic life during the late medieval period. Although the *Harants* Hermitage was dilapidated following the 1658 CE landslide, leading to the establishment of a new hermitage at the foot of *Tatev,* it was nevertheless rebuilt in the early 18th century and resumed spiritual life. The old and new *Harants* Hermitages of *Tatev,* as well as the *Kusanats* Hermitage of *Shinuhayr*, also became scriptorium and manuscript preservation, from which approximately five dozen manuscripts have reached us, exhibiting characteristic calligraphic and miniature features of the 17th–18th centuries.